



ԵՐԿԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

ՀՐԱՏԱՐԱԿԵԱԼ

ՐԻ ՍՈՓԻԱՅԷ ՄՍԵՐԵԱՆՑ

ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

„Ա՛ւ է անագան քան ո՛չ երբէք“ (Ասա՞՞):

ՏԵՏԻ Գ.—(ՅՈՒՂԻՍ-ՕԳՈՍՏՈՍ)—1881 ԸՄԻ

ԿՆՆՈՒՅՈՒՄՆ

- »ՓԱՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ« հանդիսի նիւթն է՝ Պատմական, Բանասիրական, Քաղաքական և Ազգային Գիտելիք:
- »ՓԱՐՈՍՆ« լինելով պատկերազարդ հանդէս՝ խնդրում է պատուելի ազգայնոց առաքել նորան, տպագրութեան համար, Ազգային հեղինակաց և երևելի անձանց, Հայաստանի հնութեանց և նշանաւոր տեղեաց պատկերներն, նոցա համառօտ նկարագրութիւններով:
- »ՓԱՐՈՍԻ« խմբագրութիւնն ուրախութեամբ կրնդունէ տպագրութեան համար ազգային մատենագրութեան և ազգային կենաց վերաբերեալ յօդուածներ, ազգային վէպեր, ոտանաւորներ, և այլն:
- »ՓԱՐՈՍՆ« հրատարակի ՚ի Մոսկուա վեց անգամ ՚ի տարին, այն է՝ երկու ամիսն մէկ անգամ:
- »ՓԱՐՈՍԻ« տարեկան գինն հանդերձ առաքմամբ է 5 ռուբլի:
- »ՓԱՐՈՍԻ« ներկայ ամի տետրերն առանձին չեն վաճառվում:
- »ՓԱՐՈՍԻ« ԽՄԲԱԳՐԱՏԱՆ հասցէն այս է. Москва, Меньшикова башня, домъ Милованова. (Մոսկուա. Մէնշիքովա բաշնեայ, տուն Միլովանովի):

ՐԻ ՄՈՍԿՈՒԱ
IMPRIMERIE A. A. GATZOUK.
à Moscou, Boulevard de Nikitsky, maison Gatzouk.
1881.

Վ. Պօլոյ ՍՐԻՆՔԱՆ ԿՆԻՍԻՍ ՊԵՏՐԵՐԻ և որ նկարուած վիճառից պատկերն ստանալ ցանկացողներն, վճարում են իւրաքանչիւր օրինակի համար 1 ռ.



ՍՐՈՍ ՀԱՅԱՍՏԱՆԻ պատկերազարդ հանդէսն 'ի Տէրութենէ ստացեալ թոյլտուութեան համաձայն, հրատարակվում է 'ի տարին վեց անգամ, այն է՝ Էջիմաշի Դէ անգամ (Յունուարին, Մարտին, Մայիսին, Յուլիսին, Սեպտեմբերին և Նոյեմբերին): Կորս իւրաքանչիւր տետրն բովանդակում է իւր մէջ 2 1/2 — 3 քառաձաղ թերթ 10—12 պատկերներով:

Տարեկան գինն, չը նայելով թերթերի և պատկերների աւելման, մնում է նոյն, այն է՝ 5 ռուբլի հանդերձ առաքմամբ, կանխիկ վճարելի:

Խոստացան միշտ աշխատակցելու մեղ՝ պ. Զարմայր Մ. Մսերեանց, Տ. Աստղիկ*, Ս. և Օ. Մոսկուայում:—պ. Արմենակ Սիւնի*, Մոծակ* Տիխոնով:—պ. Կ. Աղամջանեանց և Զիւան* Աղեքսանդրապօլում:—պ. Տ. Փ., պ. Տիգրան-Աշոտ*, պ. Միրզա Մսերեանց, և պ. Լուսարար-Փարոսի* Կ. Պոլսում:—պ. Գ. Մսերեանց՝ Զմիւռնիայում:—պ. Յ. Զաքրեան՝ Զէյթունում, և այլք՝ որոց անուններն դեռ իրաւունք չունենք հրատարակելու: Ունիմք նաև սեպհական թղթակիցք՝ Լոնդոնում, Փարիզում, Կ. Պոլսում, Կարին, Վան, Հսպահան, Բագու, Երևան և այլ տեղեր, որք միշտ պիտի հաղորդեն մեզ ազգային տեղեկութիւններ և ճոխացնեն մեր հանդէսը ազգային պատկերներով:

Ծանօթ: Աստղով նշանակուած անուններն կեղծանուն են (Փսեօսմի):

ՏԱՐԵՑՈՅՑ ՓԱՐՈՍԻ

1881 թուականին քրիստոսի և ՌՅԼ—ՌՅԼԱ (1330—1331) ազգիս Հայոց:

ՏԱՐԵԹԻԻՔ:

'ի սկզբանէ աշխարհի	7.389
'ի սկզբնաւորութենէ Հայոց թուականիս	ՌՅԼ
Ըստ Հայկայ շրջանին	4.372
Գ. Շրջանին Հայկայ	1.452
Փոքր թուոյն Հայոց ըստ Աշարիայի	ՄԿԵ

ՏԱՐԵՄՈՒՏՔ:

Բուն թոյն Հայոց 4.373	Օգոստ.	11
Հայոց թուականին ՌՅԼԱ	"	13
Փոքր թուոյն Աշարիայի ՄԿԶ	Մարտի	21
Գ. Շրջանին Հայկայ 1.453	"	9
Թուականին քրիստոսի 1882	Յունուարի	1

ՀԱՄԱՌՕՏ ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԱՑՈՅՑ 1881 ԱՄԻ:

Օր ԾՆՆԻԵԱՆ 'ի Յուն.	6	Համբարձումն 'ի Մայիսի	21	Բարեկ. վարագ. Խաչ . 'ի Սեպտեմ.	20
Միջոց ուտիք, աւուրք	27	Հողեգալուստ	31	Միջոց ուտիք, շաբաթք	Եօթն.
Բարեկենդան Առաջ 'ի Փետրվ.	1	Բարեկ. Ս. Լուսաւորչի . 'ի Յունիսի	21	Գիւտ խաչ 'ի Հոկտ.	25
Օր ՏԵԱՌՆԸՆԻԱՌԱԶԻ	14	ՎԱՐԳԱՎԱՌ 'ի Յուլիսի	19	Բարեկ. Յիսնակաց 'ի Նոյեմբ.	15
Բուն բարեկենդան	22	Միջոց շաբաթք պահովք	Չորք.	Բարեկ. Ս. Յակ. պհ 'ի Գեկտ.	6
Օր Աւետման 'ի Ապրիլի	7	ԱՍՏՈՒԱԾՄԻՆՏԻՆ	ՅՕգոստ.	Ս. Յակոբ	12
Օր Աւետման	12	Միջ. շաբ. պահովք	Չորք.	Միջոց ուտիք, աւուրք	17
Երեւման Խաչ 'ի Մայիսի	10	ԽՆՉՎԵՐԱՅ 'ի Սեպտեմ.	13	Օր բարեկ. Ծննդ 'ի Գեկտ.	29

ԱՌՈՒՐՔ ՄԱՀՈՒԱՆ ԵՐԵՒԵԼԻ ՀԱՅՎԱԶԱՆՑ:

* Փետրվար. 6. մահ Յովհաննու Յովակիմեան Լազարեանց (1857):—13. մահ Կերսէս Ե. Կաթողիկոսի ամենայն Հայոց (1857):—Մարտ. 19. մահ Յովսէփայ Գ. Կաթողիկոսի (1801):—Ապրիլ. 5. մահ Միքայէլի Միանսարեանց (1880):—8. մահ Գարբիէլ արք եպիսկոպոսի Այվազեանց (1880):—16. մահ Ճանիկայ Արամեան (1879):—26. մահ Ստեփաննոսի Նազարեանց (1879):—Մայիս. 24. մահ Յարութիւն վարդ. Ալամզարեան (1834):—28. մահ Ղուկասու Գ. Պարզազարեան (1878):—Օգոստոս. 2. մահ Մսերայ Մ. Մսերեանց (1873):—14. մահ Յովհաննու Գալթեան Լազարեանց (1879):—19. մահ Միքայէլ արքեպիսկոպոսի Սալլանթեան (1851):—22. մահ Մատթէոս Կաթողիկոսի (1865):—29. մահ Կարապետ վարդ. Շահնազարեան (1865):—Հոկտեմբեր. 14. մահ Ղազարայ Յովակիմեան Լազարեանց (1871):—Գեկտեմբեր. 9. մահ Խաչատրոյ Յովակիմեան Լազարեանց (1871):

ՀԱՅԵՐԵՆ ԼՐԱԳԻՐՔ ԵՒ ԱՄՍԱԳԻՐՔ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ 1881 ԱՄԻ:

1. Արարոս՝ ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական, բարոյական և ազգային, հրատարակի իւրաքանչիւր ամսոյ վերջում: Տարեկան գինն է՝ 4 ռ.
2. Մշակ՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ռ.
3. Մեղր—Հայաստանի՝ հանապազօրեայ լրագիր քաղաքական և բանասիրական: Տարեկան գինն է՝ 10 ռ.
4. Պսակ՝ լրագիր գրականական, պատմական և մանկավարժական: Տարեկան գինն է՝ 4 ռ.



ԵՐՐՈՐԴ

ՏԱՐԻ

ԵՐԿԱՄՍԵԱՏ ՀԱՆԴԻՍ ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

ՏԵՏՐ Գ

ՅՈՒԼԻՍ—ՕԳՈՍՏՈՍ

1881 ԸՄԻ

ՍՐԲՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՓԱԵԱՆ

(ԻՆՔԵՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ *)



Ս Սըրբուհի Նշան Գալփաեան, ծնեալ

ի Գարթալ գեղջ 1822 թուականին, տասներկու տարեկան հասակիս մէջ, ՚ի հօրէ որբ, եղայ մայրապետ հակառակ կամոց իմ ծնողաց: Դամանակէ մ'եաք մեկնելով Գարթալ գիւղէն հաստատեցինք մեր բնաիրութիւն Խասգիւղի մէջ: Այսպէս շարունակեցի իմ կենցաղ մինչև 43 տարեկան, և իմ կիանքն ազբատիկ աղջկանց արհեստ սորվեցնելով կ'անցունէի:



ՍՐԲՈՒՀԻ ՄԱՅՐԱՊԵՏ ԳԱԼՓԱԵԱՆ
 ИГУМЕНЬЯ КАЛФАЯНЪ. | L'ABBESSE KALFAIAN.
 (Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

Տ. Գեորգ քահանայի ամեն մէջ պառկած էր, և որոյ հետ յաճախ կը տեսնուէին Վարժապետեան Տ. Ներսէս Արքայան արքեպիսկոպոս և Արժ. Արժրուհի Տ. Գեորգ քահանայ, և ալ օր մը անոնց հետ ՚ի միասին Նորին Արքութեան հետ տեսնուելու բարեբաղդութիւնը ունեցայ, այն տեսութեան միջոցին Վարժապետեան Ներսէս Արքայան ըսաւ՝ թէ Մայրապետաց պարտքը միշտ հիւանդ և որբ նայել է, որուն յարկեց Շահազարեան Ա. Վարդապետ՝ թէ «Մայրապետաց ընկիրութիւն մը և

1865 թուականին պատահած Ժողովոյ միջոցնելը Շահազարեան Կարապետ Վարդապետ իւր հիւանդութեան պատճառաւ ՚ի Խասգիւղ Արժ.

Որբանոց մը ինչն չես հաստատեր», և ալ իրեն պատասխանեցի՝ թէ «այնպիսի գործ մը առանց ստակի չ'ըլլար, և ստակ չունիմ»: Բայց զբարդ-

*) Գրուեցաւ ըստ խնդրոյ «Փարոսի» խմբագրութեան: Հրատ.

զարբար իւր վախճանը անմիջապէս վրայ հասնելով, միջոց չունեցանք պատասխան մ'ընդունելու իւրմէ:

Հանգուցեալ Շահնազարեան Կ. Վարդապետի Որբանոց մը հաստատելու մասին ինձ առած խորհրդին համեմատ, զարձեալ ուրիշ ազգայնոց ինձ առած քաջալերական խօսքերով, սկսայ այսպիսի բարենպաստակ զօրծի մը ձեռնարկել և Որբանոց մը բանալ կարողանալու համար ամեն միջոց 'ի գործ դնել:

Ինչպէս վերը յիշած էի 1865 թուականին պատահած քօլէրայի պատճառաւ որք մնացած անօգնական և անպաշտպան աղջկունք, որք անօթի և մերկ փողոցները կը զեղերէին, վերջապէս զանոնք մասնաւոր յարկի մը տակ ժողովելով խնամել սկսայ: Այսպէս բարեսէր ազգայնոց նպատակք և իմ ունեցած պատրաստ դրամով կարողացայ տարի մը ամբողջ զայն որբերն ըստ ամենայն մասանց պատասպարել: Աւ ապա Խասգիւղի Ս. եկեղեցւոյ քարոզիչ Արսէս Սրբազանի և պատ. թագ. խորհրդոյ կողմանէ ինձ տրուած վկայականի համեմատ, նոյն եկեղեցւոյ Աւագերէց և մեր իսկ Տաներէց Արթ. Տ. Գէորդ քահանայի ձեռօք, Պօղոս Պատրիարքը հաստատած և վաւերացուցած է զՈրբանոցս յանուն փառաւոր օծնին ամենօրհնեալ Ս. Աստուածածին Կուսին Մարիամու երկոց ամաց ընծայման 'ի տաճարն: Չայս վկայական առնելով սկսայ զիմել ամեն բարեսէր ազգայնոց առատագթութեան՝ հանգանակութիւն մ'ընելու համար: Յետոյ հանգանակեալ գումարով Ղալաթիոյ մէջ կրպակ մը գնեցի երկք հարիւր օսմանեան ոսկւոյ արժողութեամբ: Այսպէս ես իմ ընթացքը երկք չորս տարի շարունակելով, հուսկ ուրեմն յաջողեցայ մի բարեմաղթական աղերսագիր մատուցանել առ Օգոստոսփառ Սուլթան Ապաիւլ-Ազիզ Վայսը, որպէս զի վերոյիշեալ հաստատութեան օրական հացի և մսի պարկեր շնորհել բարեհաճի: Կորին Ա. Եհափառութիւնը Որբանոցիս մասին հաստատ

անկեկութիւններ ստանալէ ետք, վաւերացուց զՈրբանոցս յանուն երկոց ամաց ընծայման Սրբոյ Կուսին, և վաւերացնելէ անմիջապէս ետք, 'ի նպատակ Որբանոցիս անտէրունջ զաւակաց օրական 7 հօխ միս և 15 հօխ հաց շնորհեց:

Այս հաստատութեան կանոնաւոր և մաքուր ընթացքն և կացութիւնն ամեն ազգայնոց հաճելի երևեցան՝ յօժարամտութեամբ և սիրով նպաստներ ընել սկսան, որով կարողացայ երկրորդ անգամ Որբանոց ըլլալու յարմար տուն մը գնեցի, Խասգիւղի մէջ Տաքէսեան Տաքէս ամիրայի տուն, ինն հարիւր յիսուն օսմանեան ոսկւոյ, նորա վերանորոգութեանն համար՝ երկք հարիւր օսմանեան ոսկի ևս ծախսելով, ընդ ամենը հազար երկք հարիւր ոսկի ծախսած եղայ:

Աւ այժմ Որբանոցիս մէջ ըստ բաւականի որք աղջկունք կը պատասպարին և կը դաստիարակուին վիհանձն նուիրատուաց շնորհիւ: Բայց և այնպէս մինչև ցարդ իմ փափագածիս չափ ուսմունք չեմ կրցած ներմուծել, ըստ որում Որբանոցս դասատուաց ամսականները վճարելու չափ մասնաւոր եկամուտ չունի:

Այդ Որբանոցիս նպատակն է մի միայն անդ պատասպարեալ Որբոց թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական սնունդ մատակարարելով զանոնք միով բանիւ ընկերականութեան մէջ խառնել, և բաց աստի զանոնք թէ՛ մայրաքաղաքիս մէջ և թէ՛ Հայաստանի զանազան գաւառները իբր վարժուհի խրկել:

Որբանոցիս Հիմնադիր-Տէրը պարտք անհրաժեշտ կը համարի իւր անկեղծ շնորհակալեքը հրատարակաւ յայտնելու ամեն բարեսէր ազգայնոց, որք իւրեանց թէ՛ նիւթական և թէ՛ բարոյական նպատակք քաջալերած են Որբանոցիս մայրը, և թէ՛ հաճած են այսպիսի մեծ զոհողութեամբ յառաջ եկած ձեռնարկութիւն մը աւելի յարասե շաւղի մը մէջ ընդարձակելու, որ այժմ կը փայլի 'ի պարծանս Հայ անուան:

Խասգիւղ. 1881. Սրբ. հիւ. Մ. Կ. Գալֆաեան:

Կ Ե Ա Ն Ք

Տեսել էք արդեօք ծով անդնդային,
Երբ որ մըրեկը գոտարով վերան՝
Արագ տանում է նորան բարկագին
Եւ նա սրնթաց վազում է անբան...
Ահա այսպէս է և կեանքը մարդկան:

Տեսել էք արդեօք պատերազմ ահեղ,
Որտեղ թափվում են առուններ արեան,
Որտեղ ընկնում են շատ զոհեր անմեղ,

Որտեղ պիտոյ է կովել անվախճան...
Ահա այսպէս է և կեանքը մարդկան:

Տեսել էք արդեօք մի անոյշ երազ,
Որ ձեզ տանում է աշխարհ գիւթական...
Գուր նորան զրկել կամիք հանապաղ,
Բայց նա թուչում է աղաւնու նման...
Ահա այսպէս է և կեանքը մարդկան:

1880. Կ. Սարգստեան:

ՇԻՐԱԿԻ ՄԻ ՔԱՆԻ ՀՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԽՆԾԿՕՆԻՑ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԸ *)

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՎԱՆՔԸ ԵՒ ՋԱՆԿԱԿԱՏԱՆ ՄՆԱՑՈՐԴԸ:

ՓՈՒՐԻՒՎ Կիւղին կից է մի ուրիշ գեղեցկաշէն մենաստան, որ, ըստ ասուածեան տեղական Վ. անասոր Հ. Յարութիւնի, Ս. Կարապետի անուանով, հիմնարկուած է Ս. Սարգսին ժամանակակից. այս տեղեկութիւնը ես սխալ եմ կարծում, որովհետեւ

անուաներին փոփոխութիւն չապրու համար, աւանդութեանը հետեցի և ըստ այնմ վարուեցայ:

Ս. Կարապետի եկեղեցին՝ միւսներին բոլորովին հակապատկեր քառակուսի զիւքով, մի օրօրոցաձև շինութիւն է:

Արեւելեան և արեւմտեան որմերը հաւասար չափով լայնութիւն, հետեապէս և բարձրութիւն ունին. ամեն մէկի լայնութիւնը 2 սաժ. և 2 արշին

ԽՆԾԿՕՆԻՑ ՄԵՆԱՍՏԱՆՆԵՐԸ



Ս. ԿԱՐԱՊԵՏ: Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ:

XENZKONSKIE MONASTYRI V' SHIRAK' | LES COUVENTES DU KHINZKON à CHIRAQUE.

(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

Ս. ՍԱՐԳԻՍ:

սորա (եկեղեցոյ) արեւելեան որմի վերայ գտանուող արձանագիրը, որի հետ պէտքէ ծանօթացնեմ ընթերցողիս իւր տեղում, յիշում է «Աստուածածին» բառը, և թէպէտ իսկապէս չէ հաստատում հաճարի ինչ անուան պատկանելը՝ բայց այնու ամենայնիւ այս կենդանի վկայութիւնը համեմատելով Պեր. Վ. անասոր հաղորդած անուանը հետ՝ պէտքէ մասամբ համոզուած լինենք, որ սա սուրբ Աստուածածնի անուան նուիրուած է եղել. իսկ միւսը՝ որ մենք Աստուածածնի անուանով մկրտեցինք, թերևս Ս. Կարապետի անուան. բայց թէ այս՝ և թէ այն, ես հոգևորականութեան և ժողովրդի մէջ դարերով արմատացած և հաստատուած

է. իսկ հիւսիսային և հարաւային որմերը, նոյնպէս միաչափ են, բայց առաջի երկու հանդիպակաց որմերից փոքր ինչ լայն:

Եկեղեցոյ հիմքը դրուած է երկու կարգ աստիճանների վերայ, որ գրեթէ Ս. Սարգսի եկեղեցոյ չափ նոր է և անաղարդ, և, ինչպէս արձանագիրը հաստատում է, այս մենաստանի հիմնարկութիւնը աւելի հին է քան ՈՍ հայկական թուականը, բայց թէ ինչ իշխանի յիշատակ, կամ ինչպէս նոքա ասումէին «արեւշատութեան և հոգւոյ փրկութեանը համար» շինուած է, ես անկարող եղայ ճշդութեամբ տեղեկանալու. անուրանալի է, որ այսպիսի հանգամանքում զեր են խաղում միայն

*) Տես հանդիսի նախընթաց տետրը. Հրատ.

կենդանի փաստերը—հիմնարկութեանը ժամանակակից մտկադրութիւնքը — բայց այս եկեղեցին իւր հիմնադրի յիշատակարանին արժանացած է լինելու առթիւ, մեզ էլ իւր անունը որոշ գանկու առգելում է:

Ս. Կարապետի արեւելեան որմը զոյգ երկար և նեղ եռանկիւնի զիրքով խորշեր ունի, որոնք առհասարակ դրվում են այն պատերի արտաքին կողմերում, որոնք ներքեից միւսնայն բաժնումը որմնասիւններ ունեն: Այս խորշերի կիսաբոլորակ զագաթները կազմում են ութ ութ հաս մանր կիսակլոր փորուած ուղիղ գծեր, որ սուր ծայրերով սկսում են յետ զլեռէ լայնանալ և մի տեսակ կէս արեգակի ու ճառագայթի ձև ստանալ. սոցա վերայով անցնում է որմից մի քանի վերշոք հաստութեամբ զուրս եկած մի հասարակ կամար: Այս երկու խորշերի արանքում գտանվում է սեղանի նեղ և երկար կամարակապ պատուհաններ:

Հարաւային կողմի որմը միւսնայն շէնքն է, յար և նման արեւելեանին, երկար և նեղ խորշերով ու պատուհանով, բայց արեւմտեանը՝ որից և մուտքն է եկեղեցւոյ, զուրկ է այդ տեսակ արտաքին շքեղութիւնից: Հետսային որմը կից է վերեւում յիշած Նիւղին և միայն մի աւերուած պատուհան ունի, որ ընկնում է Նիւղի դռան աջ կողմը:

Սորա և Ս. Աստուածածին եկեղեցիներին իբրև սրահ ծառայում է յիշուած աւերակ զանկակատունը, որ և արեւմտեան կողմից երկու տաճարները միաւորում է միմեանց հետ:

Ինչպէս կառուցուած են առ հասարակ մեր եկեղեցիների մեծամասնութիւնը, այնպէս էլ այս տաճարի չորս որմերի զագաթները պատկերացնում են առանձին առանձին եռանկիւնի զմբէթներ, որոց վերայով ձգուած են կամարածե և ուղիղ շերտեր. սոքա ծառայում են միայն արտաքին գեղեցկութեանը: Պատերի վաղճանները զարգարուած են անպաճոյճ և նեղ գառնիզներով: Չեղունի վերայ զրուած է զմբէթը, որի հիւսիսային — արեւելեան, արեւելեան — հարաւային, արեւմտեան — հարաւային և արեւմտեան — հիւսիսային կողմերում զրուած են չորս հաս մանր զմբէթներ, որոնք ծառայում են նոյնպէս արտաքին շքեղութեանը համար:

Այս եկեղեցին ևս անգութ և աւերիչ ժամանակի հետ կատարելագույն մրցելով՝ զիմացել է մինչև այս օր գրեթէ բոլորովին անխախտ և անեղծ զրութեամբ, թէև կաուրը տեղ տեղ պատած է կանաչ մամուռով և զմբէթի ծայրը սակաւ ինչ կործանուած է: Կաթողիկէն բոլորչի շինութիւն ունի, որի վերայ գնում է գառնիզը իբրև մի կլորակ, իսկ

նորա վերայից ամբառնում է կոնաձև զմբէթը իւր ճառագայթածե շերտերով:

Սուրբ Կարապետը ունի 5 պատուհաններ, որոց 2ը կաթողիկէի, իսկ 3ը եկեղեցւոյ 4 որմերի վերայ են, բոլորն էլ նեղ և փոքր զիրքով:

Ի ներքուստ եկեղեցին մի ծոցաւոր պատարագի սեղան ունի զոյգ մանր խորաններով. ձեղունը առանց սեան, չորս որմնասիւնների կամ լայն խորխորների վերայ բարձրացած է: Ի ներքուստ ոչ արձանագրութիւն և ոչ էլ մի որ և իցէ առանձին յիշատակութեան արժանի քանդակագործութիւն ունի: Արմերը կազմուած են արտաքինի պէս մութկարմիր և գորշ քարերից, նուրբ հարթ և վաշիլուչ շինութեամբ:

Արտաքին կողմից արեւելեան որմի ճակատին, պատուհանի բարձրում զրոշմուած է հեռեկալ յիշատակարանը՝

» Ի թուին Ոհիւ շնորհին Աստուծոյ ես Տիգրան հաւատարիմ ծառայ Մանուսոր Թախուցէս Ամիր սպասաւար
 » Հաճանշահ Չարարիայի Տեառն իմոյ տեսի զպանդխտութիւն սուրբ ուխտիս Խնձկանից և թափուր յամենայն ընչեց
 » ես վերստին նորոգեցի ամենայն պիտոյք և ապաւինեցայ ՚ի սուրբ մայրս լուսոյ ետու զիմ զԳանձագին ակն մին ձիթա
 » հանքն որ ՚ի յԱնի է և այդի մին ՚ի Մարմնաի որ Միջնայդի կրչի յաս աջնորութեան հար Յովհաննիսի և սուրբ եղբայրդս
 » և փոխարէն հատուցին զեկեղեցիս ՚ի սկզբանէ տարոյն մինչև յիկատարումն տարոյն յիմ անուն կատարեն և ՚ի տարին ինունը 1) իմ պարտնին Չարարիայ իմ եկեղեցիս և լայն որ
 » չափ ես կենդանի եմ իմ ճեղքացն և ապա ինձ յետաւողքս ճանապարհորդելոյն մինչև ՚ի զայրուստ Բանին Աստուծոյ եթէ
 » որ ՚ի մեծաց կամ ՚ի փոքունց զյիշատակս մեր խափանել հակառակի ոտիս և դատիչ բարկութեամբ սուրբ Աստուածածնիս եղեցին և որք հաստատուն պահեն արհեսեալ եղին ՚ի Տրիստոսէ: «

Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍ ՆԱԽԱԿԱՍՆ

Այս երեք մենաստանների հանդէպ, զէպի արեւելք, 10—15 սաժենաչափ հեռաւորութեամբ գտանվում է մի անդնդախոր ժայռախիտ ձորակ, որի կուրծքը քերկրով՝ անցնում է մանր և մեղմ պղպղակներով անուշահամ առուակը. սորա ծիծաղերես և ուրախ զէմբը արտաբերում է, կարծես, մի նորատի կնոջ պատկերը, որ այրիանալով՝ մատնուել է յետին թշուառութեան ու զրկուած իւր թանկագին պաճուճանքներից, երազական ցնորքնւրին խաբուած, զլորվում է իւր սիրելու գիրկը...

Այդ թերա-կղզեացեալ բարձրաւանդակի վերայ զրուած է մի ուրիշ եկեղեցի, որ մի կողմից իւր զմայլեցուցիչ տեսարանով՝ նուրբ քանդակներով և զարմանալի ճարտարապետութեամբ զբաւում է այցելուի ուշքը, իսկ միւս կողմից, իւր ամայացեալ և աղէտալի զրութիւնովը ճմլում է զհատուկ սիրար,

1) Ծանօթ. հեղ. այսինքն Կարապետի:

խելով նորանից նաև զայդ մարգարտի կաթիլների հետ, մի խորը հառաչանք, մի դառն մորմաք, և ուրիշ ոչինչ... Բնագրմամբ նա յիշում է հայ ազգի ամենակրթանիկ անցեալը, նորա մեծութիւնը, ճարտարագիտութիւնը, գիտութիւնը, ճշմարիտ քրիստոնէութիւնը և շատ բաներ, որոց կենդանի կոթողներն են այդ սրբութեան պաշտելի նշխարները, որոց ամեն մի քարը, մի բեկորը, մի քայլափոխ հողը ահագին գանձ է պարունակում իւր մէջ հայ պատմութեան համար...

Այս եկեղեցին՝ որ միւս վանքերին, թերևս, ժամանակակից շինութիւն է, կառուցուած է Ս. Ստեփանոս Վախափայտի անունովը. ում ձեռագործ լինելը յայտնի է, որովհետև թէ ներքին և թէ արտաքին կողմերում և ոչ մի տեղ արձանագրութիւն չունի. առհասարակ այսպիսի առանց յիշատակարանաց մենաստանները շատ սակաւաթիւ են մեզանում և գրեթէ չկրակայ գաւառումը գտանվում են այդպիսիք աննշան քանակութեամբ:

Սուրբ Ստեփաննոսը քառակուսի դիրք ունի և Ս. Կարապետի վանքի գրեթէ ձիշղ պատկերը կը ներկայացնէ: Որմերը հաստատուած են չորս աստիճանների վերայ, որոնք 7—8 վերշոք բարձրութիւն ունեցող քարերով շարուած են:

Արևելեան և արևմտեան որմերը ուղղակի ծիլ-ծիլ ժայռերի զագաթներին դրուած, կարծես նոցա շարունակութիւնը լինեն, որ միանգամայն զարմանք և սոսկում կը պատճառեն զիտողաց:

Հարաւային կողմից քառակուսի դիրքով մի մուտք ունի, որ առանց կիսաբոլորակ շրջանակի, ծալ ՚ի ծալ քանդակագործ սիւնակներով շրջապատուած է:

Դռան աջ և ձախ կողմերին մի մի աղեղնաձև

շրջանակով եռանկիւնաձև խորշեր կան, որոց ծայրերին, կամարների ներքև գտանվում են ճառագայթաձև փորուածքներ: Դռան բարձրը քանդակագործ շրջանակով մի նիզ և փոքրիկ պատուհան կայ:

Արևելեան կողմը գրեթէ միևնոյն տեսարանն է ներկայացնում, այն զանազանութեամբ միայն, որ այս կողմից եկեղեցին մուտք չունի. կան երկու խորշերով չորս պատուհաններ, որոնցից մէկը գտանվում է փոքր և հասարակ դիրքով կաթողիկէի վերայ:

Հիւսիսային որմը յար և նման է հարաւայինին, իսկ արևելեանը՝ արևմտեան որմին:


Այս չորս պատերի զագաթները պատկերացնում են, կարծես, չորս հառաւանդին առանձին եռանկիւնաձև զմբէթներ, որոնց վերայից ձգուած են կամարակապ շերտերը, սոքա հասնում են մինչև պատերի վերին մասերով անցնող, հասարակ գաննիզը:

Չեղունի վերայից բարձրանում է կոնաձև զմբէթը իւր վերին մասի զօտիովը և փոքրաւեր գագաթովը: Գմբէթի վերայ ձգուած են խիտ շերտեր, որոնք տեղ տեղ կտրտուած և խախտուած լինելով մասամբ ծածկուած են կանաչ մամուռով:

Ունի ընդ ամենը 7 պատուհաններ. 2 կաթողիկէի և 5ը ներքևի պատերի միջից:

Արևելեան թէ արտաքուստ և թէ ներքուստ շինուած է կոիածոյ կարմիր և գորշ քարերով: Սորա բնութեան և մարդիկների հարուածների զարերէ ՚ի վեր զիմադրած լինելու շօշափելի փաստերն են, պատերի քանդուածները և գաննիզների կտրտուածները, մաշուած ձեղունը և փշուած աստիճանները:

Ի ներքուստ զմբէթը առանց սեան բարձրացած է: Ունի 1½ սաժնի լայնութեամբ կիսաբոլորակ



պատարագի սեղան: Սեղանի աջ և ձախ կողմերում գտանվում են զոյգ մանր և մութ խորաններ, որոնց դռները սեղանի երկու կողմերիցն է:

Սեղանի կամարակապ շրջապատի հետ բարձրանալով միւս 3 որմերի կամարները ևս, կազմում են մի լայն բոլորակ, որի վերայով ամբռնում է գազաթից սակաւ ինչ աւերուած գմբէթը:

Յարտաքուստ դռան առջև գտանվում են 2 սաւ պանաքարեր, առանց թուականի և մակազրութեան:

Սորանց կից գտանվում է գեանից դրեթէ 1¹/₂ արշ. բարձրութեամբ և 1¹/₂ սաժ. երկարութեամբ, գառնիզով շրջապատուած մի շինութիւն, որ անշուշտ մի որ և իցէ յայտնի անձնաւորութեան հանգստեան տեղի լինելու է, բայց ախսն, որ զուրկ է արձանազրութիւնից: Ուղեղ սորա գծովը, դէպի հիւսիս, Վանքի միւս կողմը, Տաճարին կից է դարձեալ մի այդ տեսակ ուրիշ շինութիւն, միւսից աւելի լայն, բարձր և երկար, սորա գառնիզները լայն են և փորուածքներով զարդարուած: Այս վերջինին գերեզման անուն տալը փոքր ինչ անյարմար սեպիով, հաւանական է պարսպի կամ մի այլ շինութեան հետք կարծել:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ:

Ս. Ստեփաննոս Նախավկայ եկեղեցւոյ հանդէպ, 70—80 սաժենաչափ հեռաւորութեամբ, դէպի արեւելք մի ուրիշ թերա-կղզեացած բարձրաւանդակի վերայ գտանվում է մի բոլորովին նոր և գեղեցիկ պարսպակապ մենաստան, որ հաստատուած է կարմիր և զորշ կոփածոյ քարերով Ս. Գրիգորի Լուսաւորչի անունովը:

Սա իւր տեսքով ճիշդ Ս. Արապիտի վանքը կ'ներկայացնէ, այն զանազանութեամբ միայն, որ այս եկեղեցին սակաւ ինչ փոքր է, գեղեցիկ և աւելի նոր:

Արեւմտեան որմի աստիճանները քարի և հողի կոյտերի մէջ թաղուած լինելու առթիւ, գեանի հետ զրուած անսնուում են զոյգ եռանկիւնի խորշերը, որոնցից ամեն մէկը, բարձրանալով վերջանում է մի կիսաբոլորակ ճառագայթաձև շրջանակով: Այս զոյգ խորշերի մէջտեղում զրուած է բազմաձալ շրջանակով մի փոքրիկ պատուհան:

Պատերի վաղձանները ընդհանրապէս ծածկուած են մի քանի աստիճան նեղ գառնիզներով:

Հարաւային որմի հիմքը զրուած է ժայռերի վերայից էլ դրեթէ կէս արշին դրսով, որով ժ-դ դարի ճարտարապետը կամեցել է ցոյց տալ իւր քանքարը... և իրօք զարմանալի է, երբ մարդ պատկերացնում է մի ահագին ժայռախիտ ձորակ,

որի գազաթից խոնարհուել են 2—3 և աւելի սաժենաչափ բարձրութեամբ վիթխարի քարերը և, կարծես, ահա-ահա դոքա զլորուելու են իւրեանց փշրանքներով ձորակը հարթելու. բաւական չէր վստահութիւն այդպիսի մի բլրակի վերայ եկեղեցի կառուցանելը՝ թերևս, դիտողի սարսափը աւելի զրգուելու համար, ճարտարապետը կարողացել է պատի կէսը, այսինքն ներսի մասը խոնարհուած ժայռերի գազաթների՝ իսկ կէսն էլ, արտաքին մասը, օղի վերայ հաստատել... Ահա հանձար, որ կ'ապշեցնէ լուսաւորուած Աւրուպացուն, որ կ'գերազանցէ օտար ազգերի ժամանակակից բոլոր շինութիւնները, որ հայ անուանը և ազգութեան անցեալ փառքի և մեծութեանը կենդանի վկան կ'հանդիսանայ...

Այս որմը երկու կարգ աստիճանների վերայ բարձրանալով՝ պատկերացնում է ճիշդ արեւմտեան պատը իւր երկու խորշերով ու նեղ պատուհանով:

Արեւելեան որմը յար և նման է սորանց, իսկ հիւսիսայինը զանազանվում է նորանով, որ չունի ոչ խորշեր և ոչ էլ պատուհան, բայց ցածր և նեղ, քառակուսի դիրքով, առանց փորուածքների և խարիսխների մի մուտք ունի:

Յարտաքուստ կաթողիկէի չորս կողմերում մի մի հաս մանր գմբէթներ կան, որ միայն Տաճարի գեղեցկութեանը կ'ծառայեն:

Գմբէթը կոնաձև է և գազաթից սակաւ ինչ աւերուած:

Ունի ընդամենը 5 պատուհաններ, որոց 2 կաթողիկէի և 3ը չորս պատերի միջից են:

Ի ներքուստ կիսաբոլորակ սեղանի շրջապատի հետ բարձրանում են նաև չորս որմերի կամարները, որոց վերայ ձգուած է մի զարդարուն գօտի, որ և պահում է իւր վերայ կոնաձև գմբէթը:

Օրոցաւոր սեղանի աջ և ձախ կողմերում մի մի հաս մանր խորաններ կան, որոց մէջ մի ժամանակ դարսուած են եղել եկեղեցւոյ ոսկեայ և արծաթեայ անօթները և ուրիշ թանկագին ունեցուածքները, իսկ այսօր անմաքրութեան տեղ են դարձել...

Ի ներքուստ որմերը զորշ և թուխ կոփածոյ քարերով հաստատուած են:

Ահեղեցւոյ պարիսպը, որ բոլորովին նոր և անաղարդ զրութեամբ կ'մնայ մինչև այս օր, շինուած է քառակուսի դիրքով. արեւմտեան պատը վանքի որմին կից է, որ 3 սաժեն երկարութեամբ 5 արշ. բարձրութիւն ունի. այդ կողմից է և մուտքը:

Հիւսիսային որմի վերայ, որ նոյնչափ բարձրութեամբ 4¹/₂ սաժեն երկարութիւն ունի, դրսից փորուած են 7 հաս միմեանց կից ուռուցիկ խաչեր կիսաբոլորակ շրջանակներով. սոցա բարձրութիւնը

Հաւասար է 8—10 վերջերի: Այդ տեսակ մի քանի խաչարձաններ էլ կան արեւելեան պատի ներսի կողմում, որ մանր և զեղեցիկ կերպով քանդակագործուած են:

Այս պարսպի մէջ Ս. Գրիգոր եկեղեցու հիւսիսային կողմում, եօթը աստիճան քարեայ սանդուխտների վերայ կանգնեցրած կայ 3 սաժեն բարձրութեամբ և 5 արշ. լայնութեամբ, քնարած և պատուանդանով մի քանդակագործ խաչ. սորա երկու կողմերը ամենազեղեցիկ ներդաշնակութեամբ փորուած են զաւազանած և հարթ սիւնակներ կրկնաստիճան սրանկիւնի խորշերով և զարդարուն վերնախարիսխներով, որոց վերայով ձգուած է զարդարուն կամար. սորա երկու երկու շերտերը զարդարուն են և մի քանի կարգ, աստիճանաբար, լայն և նեղ շրջանակներ ունի:

Խաչի պատուանդանը ներկայացնում է մի քնարած քանդակ, որի կենդրոնում սեխմուած կայ մի բոլորշի-արեղակնած և նկար: Վառաթե խաչի աջ և ձախ կողմերը շատ սիրուն փորուածքներ ունի, որոց բարձր, աղեղնած շրջանակի տակ քանդակուած է խաղողի որթը իւր տերեւներով և խոշոր խաղողի ողկոյններով:

Այս խաչարձանի երեք կողմերը բոլորովին մերկ են և զուրկ փորուածքներից ու քանդակներից. նա շինուած է կարմիր կոփածոյ քարերով, որ մնում է տակաւին նոր և անաղարդ դրութեամբ:

Սորա աջ կողմում գտանվում է մէկ սաժ. կրկարութեամբ մի սապանաքար. իսկ ձախ կողմում, երկու, նոյնչափ երկարութեամբ և մեծութեամբ շերիմներ, որոց վերայ դրոշմուած կան մի քանի շարք հայկական արձանագրութիւնք, որ աղաւաղուած լինելու առթիւ ինձ կարգալ կամ օրինակել անկարելի և անհնարին եղաւ: Գոցանից մէկի վերայ պարզ և որոշ կերպով կարդացվում է միայն ՆՁԳ. Թուականը:

ԽՆԾԿՈՆԻՑ ՈՒՒՏԻ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ:

Վկարագրելով Խնծկոնից մենաստանները ես աւելորդ չ'համարեցի նաև մի թեթև հայացք ձգել նորա այս աւուր վիճակի և անտեսական դրութեանը վերայ:

Այս մենաստանները Ժ-դ դարից, կամ աւելի լաւ է ասել, իւրեանց հիմնարկութիւնից յետոյ, երբեմն երբեմն միայն Հայ զօրացած իշխանների ձեռք անցած են. տարիներով և դարերով եղել են օտարաց սեպհականութիւն, աւազակների բնակարան և զազանաց որջեր...

Երբեմն դոցա փոքրաւեր մասերը այս և այն

հայրենասէր հոգեորականի կամ իշխանի ձեռք վերստին նորոգուել են. յաճախ կազմուել է խումբ պահապանների-միաբանութիւն և յաճախ քրիստոնեայ ժողովրդի քրտանց արդիւնքը, որ ամենայն առատութեամբ թափվում էր Աստուծոյ Տաճարում, յափշտակուել է աւազակաբարոյ Տաճիկ և Վիւրդ տարրից: Վանի՛ քանի՛ եպիսկոպոսներ, աբեղաներ, քահանաներ և ուրիշ եկեղեցական սպասաւորներ մասնուել են չարչարանաց և սպանութեան...:

1877 թւին Ռուսերը յաղթութեամբ գրաւեցին ուրիշ տեղերի հետ նաև այս մենաստանները, որոնք ծառայելիս են եղել քիւրդ խաչնարածների բնակարանաց և ոչխարների դոմի տեղ:

Հայտն Վեներալ-Վաղարշանցը համակրելով Երուսաղէմի միաբան Յարութիւն Վարդապետ Չթճեանի մտադրութեանը, նշանակել էր նորան Խնծկոնից ուխտին վանահայր, աւրով նաև առանձին իրաւունքներ, և իւր այդպիսի անօրինութիւնը յայտնել էր Արսի նահանգապետի միջոցաւ շրջակայ թէ՛ Հայ և թէ՛ Վիւրդ ժողովրդոցը, և այս վերջինների ցեղապետներին հրամայելով միանգամայն, որ նոցանից և ոչ ոք իրաւունք ունենայ այլ ևս օգտուելու Վանքի այն երկու հազար օրավար հողերովը, որ նոյն իսկ հայոց թագաւորութեան ժամանակ պարգևուած էր Խնծկոնից ուխտին, և այդ առանձնաշնորհութիւնը հաստատել էր Տաճկաց Վ. Կ. Սուլթանը իւր առանձին Ֆէրմանով, թէև միևնոյն Սուլթանը բարեհաճէլ էր յիշեալ գետինը ուրիշ Վիւրդ ցեղապետի յանձնել մի այլ կալուածագրով (Թափու):

Յարութիւն վարդապետը վանահայրութեան պաշտօնը ստանձնած օրից սկսում է ամենայն աչալըջութեամբ աշխատել և դործել:

Փոքրիկ ժողովարարութիւնով և իւր ու իւր կազմած միաբանութեան յատուկ աշխատութեամբ վերանորոգում է, ամրացնում է մենաստանների խարխառած և աւերուած տեղերը, մաքրում է զարերով դիզուած աղբը, և հարթում է հողի ու քարի կոյտերը: Ս. Սարգսի, Աստուածածնայ և Ս. Կարապետի մենաստանները առնում է պարսպի մէջ, և նոցա արեւմտեան կողմում շինել է տալիս միաբանների և ուխտաւորների համար սննտակներ, խոհանոց, անասնոց դոմեր և այլն: Հարթել է և լայնացրել ճանապարհը, որ մէկ վերստից աւելի տարածութեամբ բարձրանում է քարախիտ զառիվերի անտանելի ել և էջներով:

Պարսպի դռան հանդէպ հասեցրել է ստուղ աղբիւր. տնկել է այնտեղ մի քանի ուռնիք և ձեռնամուխ է եղել աւելի բարւոքելու վանքի տըն-



ՄԱՐՈԿԻՑՈ՝—ՄԱՐԻԹԱՆՑԻ ԿԱՆԱՅԻ:
(ՄԱՐԻՏԱՆՑԻ ԶԵՆՈՒՆԻ).



ՄԱՐՈՒՔԻՑ՝—ԲՆԱԿԻՉԻ ԱԼԲԱԶԱՐ ԳԱՂԱՔԻՑ
(ЖИТЕЛИ АЛБАЗАРА).

տեսական կառավարութիւնը: Հայր սուրբը նիւթական կարողութիւն չունենալու առթիւ՝ անցեալ տարի (1880 թ.) մի փոքրիկ տարածութեամբ գետին հացահատիկ սերմանամ էր, որ հազիւ թէ միաբանութեան տարեկան պաշարը արտադրեց:

Պատրաստելով հարկաւոր եղած իրերը, Յարութիւն վարդապետը կամենում է մի նոր ջրաղաց շինել տալ:

Հողի բերութեան և կլիմայի յարմարութեան առթիւ հայր սուրբը պատրաստվում է նաև այս 1881 թուականին խաղողի այգի սնկելու, ուր եղել են սորանից մի քանի դար առաջ, որոց հետքերը, իբրև կենդանի հաստատութիւնք, մնում են տակաւին վայրենացած խաղողի որթեր, զանազան պտղատու ծառեր և այգիների քարեայ շրջապատները: Ես հաւատացած եմ, որ այդ գործունեայ և ժրջան հողեօրականը յօգուտ Խնձկօնից Ուխտին իւր թէ՛ ճիգը և թէ՛ բոլոր ձեռնաու զօհարերութիւնք չի խնայել և աւելի կ'բարեկարգէ վանքի տնտեսական դրութիւնը ու կ'արդիւնաբերէ

դարերով անպէտք մնացած մեծ տարածութիւնով արգաւանդ հողը:...

Երեք վանքերից մի քանի սաժենաչափ հեռաւորութեամբ գտանվում է հանքային երկաթի սառը ջուրը, որ բժշկութիւն է առնում բորոտներին և իւր այդ պատուական յատկութիւնով յայտնի է շրջակայ ինչպէս հայ՝ նոյնպէս և քիւրդ ազգաբնակչութեանցը:

Սորանից գրեթէ քառորդ ժամու ճանապարհ հեռաւորութիւնով, առուակի ձախ ափում, բղխում է մի ուրիշ ծծմբային բաւականի տաք ջուր, որ քարերով շրջապատուած մի բաւականի մեծ քառակուսի աւազան է ներկայացնում, սա յայտնի է իւր զովիլի յատկութիւնով, որ բժշկում է զանազան սոսակ վատ ախտեր, բայց այնու ամենայնիւ բժշկական հետազօտութեան կարօտ է:

Չափազանց շատ են այդ հանքային ջրերի համար Բէշքիլիսայ յաճախող հիւանդները:

Կ. Յովնանէանց:
(Շարունակեցի):

Հեռու երկիր թուա, փախա
Սիրուն թռչուն մեզանից:
Իմ սիրասուն քոյրն հեռացաւ
Ուրիշ աշխարհ այս տեղից:

1879

Հուտով կ'գայ կանաչ գարուն
Եւ թռչունը կ'գառնայ,
Բայց, ան... քուրիկն իմ սիրասուն
Երբէք, երբէք յետ չի գայ:

Կ. Սարգսիսեանց:

ԴՐՕՅԱԿԱԿԻՐ

ԳՈՐԾ ԱԼՓՕՆՍԱՅ ԳՕԴԷ:

Ե.

Օրհնուորների գունդն պատերազմում էր երկաթուղուց զառ ՚ի վայրի վերայ և նշան էր դարձած հրացաններին բոլոր պրուսացուց զօրքի, որ կենդրոնացած էր նորա առջևում անառաի հովանաւորութեան ներքոյ: Կոքա մէկ մէկի վերայ հրացան էին արձակում ութսուն մէտր հեռաւորութիւնով մէկ մէկից: Օֆիցերներն հրաման էին տալիս զինուորներին, ասելով՝ «պառկեցէք»... բայց ոչ ոք չէր կամենում հնազանդել, և անվիհր գունդն՝ շարունակում էր կանգնել իւր դրօշակին մօտ: Այնատարած հորիզոնում, որ լուսաւորվում էր մտանող արեգակի ճառագայթներով, հաճարի արձակած հասկերի և արօտների միջում, այդ մարդկային ամբոխն՝ չարչարուած, պատեալ աղօտ ծուխով, նմանում էր հօտի, որ յանկարծ պատահեցաւ բաց դաշտում, առաջին փոթորիկի զարհուրիլ մրկին... Եւ յիրաւի, իսկական անձրևի

պէս թափվում էին գնդակները այդ զառ ՚ի վայրի վերայ: Ասվում էին միայն հրացանների ճայթիւնը, փոսի մէջ զլորվող ուղեգնացութեան կաթսաների անորոշ ձայնը, և գնդակների շնչիւնը, որ երկար տարածվում էր պատերազմական դաշտի մէկ ծայրից ցմիւսն, կարծես թէ մի սրածայն և չարագուշակ արձագանգով: Ժամանակ ժամանակ դրօշակը, որ բարձրանում էր զինուորների զլխով, տատանուելով գնդակների մրկից, գետին էր ընկնում ծուխի ամպերի միջում. այն ժամանակ տարածվում էր մէկ ձայն, ձայն հպարտ և խիստ, որ ծածկում էր հրացանների թնդիւնը, վերաւորեալների կերկիրումը և անեծքը. «Ո՛րդեակք, դէպ ՚ի դրօշակ, դէպ ՚ի դրօշակ»... Եւ իսկոյն, Օֆիցերներից մին՝ յառաջ էր վազում. նորա անզուարթ և ստուերի նման կերպարանքն՝ գուրս էր երանում այդ արիւնահեղ մէգի միջից, — և զիւցազնական դրօշակն, կարծես թէ նոր կենդանացած, կրկին տարածվում էր պատերազմական դաշտի վերայ:

Քսանեւերկու անգամ ընկաւ նա... քսանեւերկու անգամ նորա փայտն՝ զեռ տաք, զեռ նոր ընկած մեռանող ձեռքից, 'ի նորոյ բռնվում էր, բարձրացվում, և երբ արեգակի մտանելուց յետոյ, այն՝ ինչ մնացել էր գնդից, փոքրիկ խումբը զինուորների, ծանրաշարժ յետ էր դառնում, դրօշակը արգէն դարձած էր հասարակ փայտի կտոր սէրժանա Պօրնիւսի՝ նոյն օրուայ քսանեւերրորդ դրօշակակրի ձեռքում:

Բ.

Սէրժանա Պօրնիւս հին ծառայած մարդ էր, որ հազիւ գիտէր ստորագրել իւր անունը. նա քսան տարի իւր կեանքի մէջ 'ի գործ դրաւ նորա համար, որ կարողանայ ունեւոր օժիցէրի ժապաւէն ստանալ: Բնկեցիկի բոլոր տանջանքները, զօրանոցի բոլոր բթացուցիչ ներգործութիւնը, երևում էին նորա ցած և սեպացեալ ճակատի վերայ, նորա կրնակի վերայ, նորա գնացքի վերայ... Բաց 'ի սոցանից՝ նա փոքր ինչ կակազում էր, սակայն դրօշակակիր լինելու համար գեղեցկախօսութիւն հարկաւոր չէ: Պատերազմի նոյն իսկ երեկոյին գնդի հրամանատարն ասաց նորան. «Վո՛ւ առիր դրօշակը, քանզի զինուոր. թող մնայ նա քեզ մօտ»: Եւ նորա պատերազմական մունչիքի վերայ, որ անձրեւից և վառօդից կորցրել էր արգէն իւր գոյնը, մարկիտանտկան կարեց իսկոյն պողպարապօրշէջիկի ոսկիթել ժապաւէնը:

Այս էր հպարտութեան միակ նշանը այս աղքատ տիկ կեանքի մէջ: Մէկ բուպէում աղքատ հասարակ զինուորի մարմինը ուղղուեցաւ: Այս ողորմելի էակս, որ սովոր էր ման գալ կորաքամակուած, աչքերը գետին ցցած, ստացաւ այդ բուպէից պարթեւութիւն, միշտ զէպ 'ի վեր նայող հայեցուած, տեսանելու համար՝ թէ ինչպէս տատանում է օդի մէջ ջուրի այդ կտորը, և բռնել նորան որքան կարելի է ուղիղ, բարձր,—բարձր՝ մահից, դաւաճանութիւնից, հարուածից: Ոչ ոք տեսած չէ երբէք աւելի բաղաւոր մարդ քան սէրժանա Պօրնիւսը պատերազմի օրերին, երբ նա երկու ձեռքով բռնում էր իւր դրօշակի փայտը, գեղեցիկ անցուցուած կաշեայ շապկի մէջ: «Նա ոչ մի բառ ևս չէր արտասանում, չէր շարժում: «Նա, ծանր, նուիրագործող անձի նման, բռնած ունէր նորան իւր ձեռքում իբր սրբազան մի բան: «Նորա բոլոր կեանքն, նորա բոլոր զօրութիւնն կենդրոնացած էր այն ժամանակ նորա մատերի մէջ, որք սեղմում էին՝ գեղեցիկ, ոսկեգոյն ջուրի կտորը, որի վերայ կարկտի նման թափվում էին գնդակները, և նորա աչքերը, որք նայում էին ուղիղ պրուսացիների

երեսին՝ յառաջ կոչող կերպարանքով, կարծես թէ ասում էին նոցա. «Եթէ կարող էք փորձեցէք խլել նորան ինձանից»:

Ոչ ոք չփորձեց կատարել այդ, մինչև անգամ ինքն մահը: Բօրնի և Պարավէլտաի՝ երկու արիւնահեղ կռիւներից յետոյ՝ դրօշակն միշտ յետ էր վերադառնում կոտորուած, ծակծկած, թափանցիկ վերքերով. բայց և միշտ տանում էր նորան նոյն իսկ ծերունի Պօրնիւսը:

Գ.

Հասաւ վերջապէս Սեպտեմբեր ամիսը. սկսուեցաւ զօրքի կանգնումը Մէցի առջևում, պաշարումը, և այն երկար գալաթումը ցէխի միջում, ուր թնդանօթները ծածկվում էին ժանկով և ուր աշխարհիս վերայ առաջին զօրքն՝ զեղցուցուած անգործունէութիւնից, համբաւների, ուտելեաց պահասութիւնից, մեռանում էր ջերմից և սրանդուլութիւնից, զէնքի մօտ, որ կանգնեցուցուած էր ըստ զինուորական կանոնի: Ոչ մեծաւորները, ոչ հասարակ զինուորները՝ աւելի չէին հաւատում յաջողութեան. միայն Պօրնիւս զեռ հաւատում էր: «Նորա երեք գոյնով ջուրի կտորն փոխանակում էր նորան ամեն բան, և մինչ զեռ նա զգում էր նորան իւր մօտ, նորան երևում էր՝ թէ զեռ ոչինչ կորուսուած չէ: Եւ որովհետև, անբաղդութեամբ, այնուհետև ոչ մէկ կռիւ չեղաւ գնդապետն պահում էր դրօշակը իւր մօտ, Մէցի արուարձանների միոյն մէջ, և ողորմելի Պօրնիւսը նմանում էր տիրած մօր, որի զաւակը յանձնուած է ծծմայրին: «Նա միշտ նորա վերայ մտածում էր: Յետոյ, երբ սրանդուլութիւնն սաստիկ նեղացնում էր նորան, նա վազում էր Մէց և բաւական էր նորան տեսանել դրօշակը իւր տեղում, հանդարտ թեքուած պատին, վերադառնալու համար տուն լի զօրութեամբ, համբերութեամբ, բերելով իւր հետ, իւր թրջած վրանը՝ կռիւների մտածմունքներ, յառաջ խաղալու փառաւոր բացուած երեք գոյնի դրօշակով, տատանեալ հեռու՝ պրուսացիների տրանշէյնների վերայ:

Մարշալ Բազէնի հրամանը քանդեց նորա բոլոր երեւակայութիւնները: Մէկ անգամ, զարթնելով առաւօտեան, Պօրնիւս տեսաւ բոլոր բանակը մեծ շփոթի մէջ. զինուորները, որք խումբ խումբ կանգնած էին, կատաղութեան աղաղակով գոգոում էին միմեանց, սպառնալով իւրեանց բռնովը զէպ 'ի մի կողմ, զէպ 'ի քաղաք, կարծես թէ բարկութիւնն ինքն ցոյց էր տալիս մեղաւորին: Ավում էին ձայներ. «Բռնեցէք նորան... սպանեցէք նորան...»: Եւ օժիցէրներն թոյլ էին տալիս խօսել... «Նոքա ման էին գալիս մի կողմով, իւրեանց գլուխը

կախած, կարծես թէ ամաչում էին իւրեանց սեպ-
 հական զինուորներից: Եւ յիրաւի, կար ինչեց
 ամաչել: Հարիւր յիսուն հազար զօրքի առաջեւ, որ
 գեղեցիկ զինաւորուած էր, որ դեռ կենդանի էր,
 նոր էր կարգացուած Մարշալի հրամանը, որով
 յանձնվում էին նոքա, առանց պատերազմի, թըշ-
 նամոյն:

— «Իսկ զբոլակները՝ հարցուց Պօրնիւս, այլա-
 գուններով... Գրոշակները յանձնուած էին՝ միւս
 բոլոր բաների, հրացանների, անփնաս մնացած սայ-
 լերի հետ... » Տէր Աստուած՝... պրպրաց՝
 կակազելով ողորմելի մարդը: «Իսկ իմ զբոլակս,
 նոքա՝ ինչ որ և լինի՝ չեն ստանալ... Եւ նա
 շտապաւ վազեց դէպ ՚ի քաղաք:

Գ.

Այն տեղ ևս մեծ շարժում կար: Քաղաքացիք,
 ազգային սպասալարք, ժամանակաւոր զինուորք,
 ազազակում էին, ալեկոծվում էին: Երեսփոխանք
 անցնում էին զողորդալով զժգոհութիւնից, ուղ-
 ղելով իւրեանց գնացքը դէպ ՚ի Մարշալի պալատը:
 Պօրնիւս միայն ոչինչ չէր տեսնում, չէր լսում:
 Եւ ինքնիրեն խօսում էր, բարձրանալով արուար-
 ձանի փողոցով: «Իսկ ինձանից իմ զբոլակը...
 բայց ոչ, միթէ այս կարելի բան է: Եւ ո՞վ ունի
 իրաւունք խլելու: Թող ինքը տայ պրուսացիներին
 այն, ինչ պատկանում է իւրեան, թող տայ իւր
 ոսկեզօծ կառքերը, գեղեցիկ արծաթեայ կահ կա-
 րասիքը, որ բերել է Մէքսիքայից... Բայց սա,
 սա իմ... այո՛... իմ պատիւն է: Ես թոյլ չեմ
 տալ, որ զպչեն նորան...»

Բոլոր այս կիսակատար խօսակցութիւնն թէև
 ընդհատվում էր արագութեամբ զնայուց և կակա-
 զութիւնից, բայց ծերունւոյս սրտում հասունա-
 նում էր մի կատարեալ միտք: Միտքը պարզ էր և
 ըստ ամենայնի որոշեալ—առնել զբոլակը՝ անցնել
 նորան գնդի միջեց, պատառել պրուսացիներին և
 անցանել նոցա հետ, որք կը ցանկան գնալ նորա
 ետեկից:

Երբ եկաւ նա նշանակեալ տեղը, չէին կամենում
 նորան թողնել մօտենալ անգամ: Գնդի հրամա-
 նատարն, նոյնպէս վայրացած, ոչոքին տեսանել չէր
 կամենում... Բայց Պօրնիւսի հոգը չէր: Եւ
 գոչում էր, երգվում էր, կտում էր զինուորներին.
 «Իմ զբոլակս, ես կամիմ ստանալ իմ զբոլակս...
 ազազակում էր նա: Վերջապէս բացուեցաւ պա-
 տուհանը:

- «Այս դու ես, Պօրնիւս»:
- «Ես, գնդապետ»:

— «Բոլոր զբոլակները գտանվում են զինարա-
 նում. գնա՛, այն տեղ կը տան քեզ ստացագիր»...

- «Ստացագիր... ինչո՞ւ համար»:
- «Այդպէս է Մարշալի հրամանը»:
- «Բայց, գնդապետ»...
- «Թող ինձ հանգիստ»... և պատուհանը փա-
 կուեցաւ:

Օրնուկի Պօրնիւսը զողաց արբածի պէս:
 — «Ստացագիր... ստացագիր»... կրկնում էր
 նա: Յետոյ նա կրկին յառաջ վազեց՝ հասկանա-
 լով մէկ բան միայն, թէ զբոլակը գտանվում է
 զինարանում և թէ նորան հարկաւոր է ստանալ
 ինչպէս և լինի:

Ե.

Օրնարանի դռներն բոլորովին բաց էին ճանա-
 պարհ տալու համար պրուսացւոց սայլերին, որք
 կարգով կազնած էին: Պօրնիւսին կալաւ զող,
 երբ մտաւ ներս: Միւս բոլոր զբոլակակիրք ևս այս
 տեղ էին. նոքա թուով կլինէին հարիւր յիսուն
 կամ երկու հարիւր. բոլորն ևս տրտում ու մուռն
 կանգնած էին: անձրեւի տակ գտանուող մնայլ
 սայլերը, բոլոր մարդիկը,—այս ամենայն նմանում
 էր թաղումի:

Բազէնի բանակի բոլոր զբոլակները խառնի-
 խուռն ձգուած կային մի անկիւնում, ցիխտա սա-
 լայատակի վերայ: Ոչինչ կարող չէր լինել աւելի
 տխրալի՝ այդ պայծառ ջողի կտորներից, այդ ոսկեայ
 ժապաւէնների մնացորդներից և գետին ձգուած,
 անձրեւից թրջուած և ցիխով ծածկուած զբոլակ-
 ների գեղեցիկ փորագրեալ կոթերից: Արդազրիչ
 օֆիցէրն, որի պարտականութիւնն էր յանձնել
 նոցա, առնում էր ամեն մինը իւր ձեռք մէկ մէկի
 ետեկից, և երբ տալիս էր գնդի անունը, իւրաքան-
 չիւր զբոլակակիր յառաջ էր գալիս, ստացագիրը
 ստանալու համար: Անշարժ, անտարբեր, երկու
 պրուսացի օֆիցէր նայում էին զբոլակների տա-
 րուելոյն վերայ:

Այսպէս գնում էր զուրք՝ մեր սրբազան, փառա-
 ւոր զբոլակներ, ցուցանելով ձեր վէրքերը, զպչելով
 տխրութեամբ սալայատակին, գնդակով խփուած
 թռչունների թռեւերի նման: Գուրք գնում էր ա-
 մօթով, որ բնական է ամենայն ինչ գեղեցիկի, երբ
 ծածկում են նորան նախատիքով, և իւրաքան-
 չիւրդ ձեզանից տանում է իւր հետ Պաղղիոյ մի
 փոքրիկ մասը: Չեր գունաթափ ծալուածքներն
 ունին իւրեանց մտքում հեռաւոր արշաւանքների
 արեգակի ճառագայթները, իսկ գնդակների տեղերն
 խօսում են անյայտ ընկած հերոսների վերայ...

— «Գօրնիւս, քո կարգն է... Քեզ են կոչում: Գնն ստացիր ստացագիրը»...

Համ էր հարկաւոր նորան ստացագիրը... Գրօ- շակը այս տեղ էր, նորա առջևում: Այդ դրօշակը անտարակոյս նորանն էր, ամենագեղեցիկն և ամենից շատ վերաւորեալն... Եւ, տեսանելով նորան, ե- րևեցաւ նորան իբր թէ նա զեռ կանգնած է այն տեղ՝ զառ 'ի վայրի վերայ: Նա լուծ է ինչպէս շշնջում են զնդակները, ինչպէս պատանվում են կաթսաները, և զնդակաւի ձայնը. «Որդեակք, զէպ 'ի դրօշակ, զէպ 'ի դրօշակ»... Յետոյ, երբ քսան- ևերկու հօգի նորա ընկերներէից ընկան, նա, քսան- ևերրորդն, վազից բարձրացնելու և բռնելու համար անբաղդ դրօշակը, որ տատանվում էր, ըստ որում չկային աւելի ձեռքեր, որ պահէին նորան: Այո՛,

այդ օր, նա երգուեցաւ պաշտպանել և պահել նորան մինչև ցմահ: Ինչ այժմ... Այսպիսի մտած- մունքներից արիւնն խփեց նորա զլսին: Արբեցած, մոլորուած, նա ընկաւ պրուսացի օֆիցերի վերայ, խլեց նորա ձեռքից իւր թանկագին դրօշակը, բռնե- լով նորան երկու ձեռքով, յետոյ աշխատեց կրկին բարձրացնել նորան, որքան կարելի է բարձր, ազա- ղակով. «զէպ 'ի դրօշ...» Բայց յանկարծ կարուե- ցաւ նորա ձայնը: «Նա զգաց ինչպէս դողաց դրօ- շակի փայտը, ինչպէս նա ընկաւ նորա ձեռքից: Այդ օրի, այդ մահացու օրի մէջ, որ ծանր է նստում նուաճուած քաղաքների վերայ, դրօշա- կներն աւելի չեն կարող տարածուիլ, ոչինչ ազատ բան աւելի կարող չէ ապրել... Եւ ծիրունի Գօր- նիւս ընկաւ մեռած՝ իբր կայծակից խփուած...»

ՏՈՒԹՈՐ ՏԻԳՐԱՆ ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ

Հանդիսա նախնթաց տեսրէն յայտնի է մեր ընթերցողաց՝ թէ Մեծ. Տոբթոր Տիգրան Փեշտի- մալճեան Ա. Պօլտոյ «Մի- ացեալ Ընկերութեանց» Տնօրէն Ժողովոյ Ատենա- պէտ ընտրուած էր: Այսօր տպագրում ենք նորա կեն- ղանագիրը և նորա գե- ղեցիկ ճառը, որ խօսեցած էր նա նոյն Ընկերութեան մէջ՝ իւր ընտրութենէն յետոյ, և որ այս է.

«Տեսրէք Երեսփոխանք: Միացեալ Ընկերութեանց Երեսփոխանական ժողովոյ իւր Տնօրէն ժողովոյն ատե- նապետութեան պաշտօնն կուգէ յանձնել ինձ: Հնոր- հակալ եմ յոյժ ձեր առ իս ցոյց տուած վստահութեան համար:

«Ներեցէք սակայն որ նոր Տնօրէն ժողովն կազմող ան- զամոց անուններն պաշտօ- նապէս ձեզ չը ծանուցած, մի կարևոր առաջարկութիւն առնեմ, որոյ ընդունելու- թենէն կախեալ է նախ իմ պաշտօնավարութիւնս:

«Յարուցանելու ինդիրս ամենակարևոր է ինձ համար: Առանց շքասացութեան և համառօտ կերպի հարկ է որ յայտնեմ զայն:

«Առաջին անգամն է որ կը ներկայանամ ժողովոյդ: Կը սխալեմ արդեօք երբ կենթադրեմ թէ նորա, որք պատուա- սիրեցին զիս իւրեանց քուէներով, տեղեակ էի Միացեալ Ըն- կերութեանց նկատմամբ ունեցած կարծեացս: Չէր մէջէն նորա որք խօսակից եղել էին ինձ ընկերութեան ընթացքին վերայ,



ՏՈՒԹՈՐ ՏԻԳՐԱՆ ՓԵՇՏԻՄԱԼՃԵԱՆ

ДОКТОРЪ ДИГРАНЪ ПЕШДИМАЛДЖИАНЪ. D-r DICRAN PÉCHE- DIMALDJIAN.

(Պատկերս նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

և նորա որք առիթ ունեցել էին կարգալ հրապարակաւ յայտնած ինչ ինչ գիտողու- թիւնքս ընկերութեան նպա- տակին նկատմամբ, քաջ զի- տեն թէ ես կատարելապէս համոզուած եմ թէ Միա- ցեալ Ընկերութիւնն իւր այժմեան ուղղութեանց մէջ մնալով, որչափ և նորա նպատակն զովելի լինի, որ- չափ և ժրջան լինին նորա զօրծողքն և հասարակու- թիւնն առատածեան, չէ կա- րող հզօրապէս օգնել մեր գա- ւառացի ազգայնոց թշուառ վեճակին:

«Միացեալ Ընկերութիւնն ուրիշ ընկերութեանց պէս չէտար մի մասնաւոր և սահ- մանափակ նպատակաւ աշ- խատի: Սա բովանդակ Ազ- գին Ընկերութիւնն է, յորմէ Ազգն իրաւունք ունի մեծ բարիքներ ակրնկալել, նոյն իսկ նորա համազգային լի- նելուն պատճառաւ: Ես կը կարծեմ թէ սա առաջին օրէն ճանապարհ երած է և կը գործէ ցարգ, առանց կանխապէս ուսումնասիրած լինելու մեր գաւառացի ազ- գայնոց էական և անմիջա- կան պէտքերն:

«Ըստ իս, սոսկ մտաւորական կրթութիւնն չէ այս ժամուս Փոքր Ասիոյ ազգայնոց անհրաժեշտ պէտքն, և թէ որ Միա- ցեալ Ընկերութիւնն մի միայն իւր ներկայ ուղղութեանն մէջ յարատեւէ, ազգին մի մասն զեռ երկար առեւններ խաբեպա- տիր յոյսերով սնուցած պիտի լինի, և Ազգն տեսնելով մի օր որ ընկերութիւնն չը փոյսցներ ինչ որ կը խոտանար, զուցէ մի մահաբեր անտարբերութիւն պիտի յղանայ նորա մասին, եթէ արդէն ընկերութեան անձուկ վիճակն այդ անտարբերու-

Թեան սկզբնաորութենէն յառաջ չէ եկել:

«Պէտք է որ Միացեալ Ընկերութիւնն հուսի ուրեմն ըմբռնէ այն ընդհանրացած ճշմարտութիւնն թէ ազգին մտաւորական զարգացումն նիւթական զարգացման հետեանքն միայն կարէ լինիլ, և թէ այս վերջինն պէտք է, ամեն բանէ յառաջ, իւր ուշադրութիւնն դրաւել:

«Իմ համոզումն է թէ մենք խիստ տկար մի նեցուկ ընծայած կը լինիմք ազգայնոց՝ եթէ լոկ դպրոցներ բանամք նոցա և դասագրքեր յղեմք: Հայաստանի և Արևիկոյ հայր սովետանջ ևն կամ աղքատ: Նորա տգէտ են իւրեանց տշխատութիւնն առաւել արգասաւոր առնելոյ մասին: Նորա դրքէ յառաջ հացի պէտք ունին և գիտութենէ յառաջ արհեստի:

«Արդ՝ նկատելով որ Ազգն ամեն ժամանակ գործնական միջոցներով հաստատել է իւր գոյութիւնն, նկատելով որ մեքորեայ յիմնամեայ կեանքն իսկ մեծ ապացոյց է այս ազգային ձգտման: Նկատելով միանգամայն որ ընկերութիւնս, չը կատարելով ինչ որ պէտք է կատարել այս հակման նպատակու համար, մեծ պատասխանատուութեան ներքև պիտի ընկնի ապագային առջև, անհրաժեշտ կը թուի ինձ որ Միացեալ Ընկերութիւնն բարեփոխէ իւր ուղղութիւնն և իւրեան նպա-

տակ առնու նախ փոքր Ասիոյ հայոց անտեսական դրութիւնն բարեդրել:

«Պիտէք արդէն թէ Ազգն, յորմէ կը սպասեմք ամեն նրպասս, չը գիտեր ընդհանրապէս վերացական գաղափարներով շատանալ, և մեծաւ մասամբ այդ ուղղութիւնն պայման իսկ կը դնէ իւր բարոյական և նիւթական աջակցութիւնն նուիրելու համար ընկերութեանս:

«Իրաց այս վիճակի մէջ պարտք կը համարիմ ինձ յայտարարել թէ ես և ս պայման կը դնեմ ձեզ ընդունիլ այս կանոնադրական բարեփոխումն, եթէ կուգէք որ առանց իմ համոզմունքս բռնաբարելու կարենամ ստանձնել Տնօրէն ժողովոյ ատենապետութեան պաշտօնն: Ապա թէ ոչ, ազգային իրական շահոց մասին ունեցած գաղափարներս պիտի մղեն զես ոչ միայն չընդունիլ այդ լոկ կրթական պաշտօնն, այլ և գտնել մի այնպիսի ընկերութիւն որ համապատասխանէ Փոքր Ասիոյ տեղական պիտոյից:

«Առաջարկեմ: Բարեփոխել հիմնական կանոնագրին ճակատն արձանագրուած տողն և ստել:

«Նպատակ. — Հայաստանի և Արևիկոյ հայոց անտեսական բարեդրմանն նպաստել և նոցա մէջ նախնական ուսումն ծաւալել:»

ՋԵԼԼԱ-ՍՕԼԹԱՆ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԸ

ԲԵՂԳԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԵՆՔ՝ համարում մեզ որ կարողանում ենք այսօր կրկին անգամ հաղորդել մի քանի ուշադրութեան արժանի տեղեկութիւններ Պարսից Շահի երէց որդու՝ Օէլլա-Սօլթանի և մեր Պարսկաստանցի ազգայինների վիճակի մասին: Նորին Ա. Եհափառութիւնը, անցեալ Փետրուար ամսին կոչուելով հօրից Թէհրան, Մայիս ամսում միայն վերադարձել է իւր բնակութեան տեղին՝ Սպահան:

Ասեմովա Օէլլա-Սօլթանը, որի իշխանութեան ներքոյ գտնվում է այժմ Պարսկաստանի երեք մասը, յայտնի է իւր ազգօգուտ գործունէութեամբ: այստեղ հարկ չէ թուել մի առ մի նորա ազգաշահ և օգտաւէտ գործունէութեան արգասիքը, բաւական է ասել, որ Պարսից արքայազնը, քաջ հասկանալով՝ որ ամենայն ազգութեան թէ հասարակական և թէ քաղաքական բարօրութիւնը կախուած է դորա մտաւորական զարգացման աստիճանից, մեծ ճիգ է թափում պատասել տիրապետող խուարի քոյը և սակաւ առ սակաւ հաստատել լուսաւորութեան դրօշը իւր հայրենիքում: Եւ ահա՛ այժմ ևս, ինչպէս մեզ հաղորդում են, այդ իսկ նպատակաւ օգեւորուած, նա հիմնում է մի արքունական դպրոց Սպահանում, որի համար արդէն բերել է իւր հեռ Թէհրանից չորս հմուտ և բանիմաստ ուսուցիչներ: Ուրեմն մենք տեսնում ենք, որ այսօր Պարսկաստանում՝ Նորին Ա. Եհափառութեան շնորհիւ լուսաւորութեան գաղափարը, նոր ոյժ ստացած, խստիւ մաքառում է խաւարի և ագիտութեան դէմ և յաղթութեան դրօշակը

ձեռին նոր զարդ է աւելացնում Օէլլա-Սօլթանի փառաւոր գործունէութեան մէջ:

Այժմ մասնաւորինք մեր խօսքը և դառնանք տեղացի Հայերի վիճակին: Ա. Եհափառ արքայազնը, հետեւելով իւր վսեմ հօգու թելադրութեան, մինչև այն աստիճան վիհանձն է հանդիսանում իւր գործերով, որ ոչինչ խորութիւն չէ գնում Մահմետականների և իւր հպատակ քրիստոնեայ Հայերի մէջ. նա հաւասար խնամքով խնամում է և սոցա և նոցա: Այսպէս, մեզ հաղորդում են Չուղայի վանքից՝ որ Ծննդեան ամսին թաղաւորազնը ներկայ է գտնուել ջրօրհնաց հանդիսին և ապա ժամասացութիւնից յետոյ, այցելելով նոյնպէս և Առաջնորդարանը, բարեհաճել է ամենայն քաղաքավարութեամբ շնորհաւորել Սրբազան Գրիգորիս Առաջնորդին և բոլոր հանդիսականներին Ծննդեան ամսը. հուսկ յետոյ այցելել է և ապարանը և քննելով գորան, հարցրել՝ արդեօք այդ ապարանը հրատարակում է Հայոց լրագիր, թէ ոչ, և երբ բացասական պատասխան է ստացել, ջերմ ցանկութիւն է յայտնել, որ տեղային բանիմաստ Հայերը ձեռնամուխ լինեն այդ բազմաշահ ազգօգուտ գործին: Ափսոս որ արքայազնի ցանկութիւնը անիրագործադրելի պիտի մնայ, որովհետև այդ գործը նախ կարօտ է հմուտ խմբագրի և ապա բաժանորդների, որոնց թիւը մեզանում, առ հասարակ, շատ և շատ սակաւ է:

Ինչո՞ք և այնպէս, մեզ համար ուրախալին այն է, որ արքայազնը այդպիսի աշաւուրջ հսկողութեամբ է վերաբերվում դէպի իւր հպատակ Հայերը:

Նորին Վեհափառութիւն՝ Օգլա-Սօլթանը, աշխարհատես և ողորմած լինելով, այնքան վեհանախօսութիւն և մարդասիրութիւն ունի, որ նորա երկրում այսօր և օտար ազգի որդիքը կարողացել են արժանանալ նորա վեհազոյն խնամքին և Մահ-մետականների հետ հաւասար հովանաւորութիւն վայելել: Եւ մանաւանդ մեր յոյսը մեծ է, որ նա

երբէք իւր խնամքը պակասացնելու չէ Հայոց ազգից, որ միշտ պիտի յիշէ նորա փառաւոր անունը:

Հանդիսիս սկզբում ընթերցողք կը գաննեն Արքայազնի նորատպ գեղեցիկ պատկերը, հանուած այն լուսանկարից, որ օւղարկուեցաւ մեզ Նորին Բարձրութեան հաճութեամբ:

ԱՒՍՏՐԱԼԻԱՅԻ ԱՊԱԳԱՅՆ

Աւստրալիայն համեմատութեամբ երկրագնդիս միւս աշխարհների հետ հարուստ է գաշտերով և անապատներով. այս համարվում է Աւստրալիացւոց կողմանէ աներկբայելի իրողութիւն: Սակայն այսպէս չեն նայում նորա վերայ ճանապարհորդներն, որք հիմնաւոր կերպիւ ուսել են նորան: Արկիրդ այդ, ճիշդ խօսելով, երբէք չէ՛ ներկայացուցած անապատ և երբէք նոյնպէս եղած չէ՛ առանձին պողաբեր. բուսականութեան կողմանէ նա ունի բռնած միջին տեղի, և տարակոյս չկայ՝ թէ մշակութեան աճելովն, այն է՛ խաշնարածութեան և երկրագործութեան տարածուելովն, Աւստրալիայն կարող պիտի լինի կերակրել ժողովուրդ, որ թուով հաւասար լինի եւրոպայի բնակչաց թըւոյն: Աւստրալիայում չեն պատահում այնպիսի ամայի անապատներ, որպիսի է Սահարայն. նորա մէջ չկայ նոյնպէս և այն համարեա թէ անբնակ հիւսիսային գոտիներն, որք գտանվում են մեր բնակած ցամաքում: Նորա քանի մի մասունքն միայն մնացին առանց հետազօտութեան, և թէ այդպիսի մասունք գեռ ևս կան, նոքա ևս ո՛չ այլ ինչ են եթէ ո՛չ գետնի կտորներ, որք գտանվում են նորա միջում, և եթէ նոքա գեռ ևս հետազօտուած չեն հիմնաւոր կերպիւ, սակայն՝ այսքանս յայտնի է, ինչպէս պատմում են, որ նոքա ներկայացնում են տափարակ դաշտագետիներ գեղեցիկ բոյսերով: Ահագին հօտեր արածվում են Աւստրալիոյ ցամաքի վերայ: Աւստրալիայի մէջ բոլորովին չկայ որքան և իցէ մեծ կտոր գետնի, որ լինի բոլորովին անպլտուղ և անջուր: Ճանապարհորդներն, որք հետազօտեցին Աւստրալիայի հողը, երբէք չենթարկուեցան նորա մէջ

այն զարհուրելի զոհանքների և տառապանքների, որոց պատահեցան իւրեանց ճանապարհում Արիկէի հետազօտիչքն:

Բացակայութիւնն բարձր լեռների նոյնպէս գեղեցիկ պայմաններից մինն է երկիրը գործելու համար: Աղանակն Աւստրալիայի մէջ այնքան լաւ է, որ թոյլ չէ՛ տալիս տարածուելոյն փոխադրական հիւանդութիւնների: Աւստրալիայում պատահում են մինչև 157 հազար տեսակ բոյսերի: Աւստրալիայի պարտեզներն գովարանվում են անորինակ ճոխութեամբ և իւրեանց ծաղկեցիկ գեղեցիկ հոտովն. այն տեղ գեղեցիկ բուսանում են նաևս բանջարեղէնք: Բաց ՚ի վայրենի անասնոց և օձերի, որք առաջին ժամանակներում միայն էին Աւստրալիայում, այժմ կան այն տեղ Աւրոպայէն տարուած բոլոր անասունների տեսակներն: Արմատական սև բնակիչքն Աւստրալիոյ չեն ցոյց տալիս մեծ դժուարութիւն երկրագործութիւնը ծաղկեցնելու համար. նոքա մասամբ բաւական արագ ոչնչանում են (մեռանում են), չկարողանալով տանիլ եւրոպական լուսաւորութիւնը, բայց և են յոյժ գեղեցիկ գործունեայ մարդիկ ծառայութեան մէջ, զորօրինակ՝ ոստիկանութեան մէջ: Արպէս նշանաւոր երևոյթներից մին կարելի է ցոյց տալ այն տեղի բնակիչների զաւակների վերայ. նոքա մանկութիւնից երևեցուցանում են մեծ ընդունակութիւն և շատ սիրում են ուսումը, բայց տարիներով և՛ այս և՛ այն կորչում է նոցա մէջ: Նոցա համար բացուած կան շատ դպրոցներ, որք յիշուած պատճառով մինչև ցայժմ չունին գեղեցիկ հետեանք:

ՎԻԿՏՕՐ ՀԻՒԳՕ

Փետրուարի 26ից մինչև Մարտի 2ը Փարիզում անուկեցաւ երևելի Ֆրանսիացի բանաստեղծի՝ Վիկտօր Հիւգօյի ծննդեան 79 երորդ տարեդարձը. մեծ նշանակութիւն ունին նորա հանրածանօթ հեղինակութիւնները, որոնց մեծ մասը թարգմանուած են բոլոր եւրոպական լեզուներով:

Նա ծնաւ Բէզանսօնում 1802 թուականին. նորա հայրը վարել է Վայսերական գվարդիայի օֆիցերի պաշտօն և մի ժամանակ եղել է Նահանգապետ Լըբա կղզում: Նորա հեղինակութիւններից

մի քանիսը իւրեանց գեղեցիկ յատկութիւնների շնորհիւ տարածուել են կարճ միջոցում այնպիսի մեծ քանակութեամբ, որ ահագին նիւթական միջոցներ են շնորհել նորան: Նորա փառքը, իբրև աշխարհածանօթ հեղինակի, հրատարակուեցաւ մանաւանդ այն ժամանակ, երբ տարածուեցան եւրոպայում նորա «Օրծազող մարդ» վերնագրով ուսմանը, և ապա «Աշնանային Տերեւներ» և ուրիշ գիւրքմթնիկ և յոյժ ախորժիկ լեռնական բանաստեղծութիւնները, որք լի են սքանչելի տխուր



ՀԱՐԱՒԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ:—ՄԱԳԴԱԼԻՆԻ ՍՐԲՈՒՀՈՅ ԳԵՏԸ:
 (ՐԻՅԱ ՏՎ. ՄԱԳԴԱԼԻՆԻ).

կրգերով: Վժբաղըբար, երևելի բանաստեղծը քանի ծերանում է, այնքան առաւել հեռանում է այն պարզութիւնից, որ նշմարվում էր նորա առաջին գործերի մէջ: Հիւզոյի առաջինը անկումը մանաւանդ զգալի է նորա „ԼՅՂ“ մակագրով հեղինակութեան մէջ, որտեղ նա աշխատում է ստորացնել այն ժամանակակից գիտութիւնների նշանակութիւնն, որ մեր պարծանքը և մեր ոյժն են կազմում: Նորա նոր հրատարակած երկու հատոր „Les quatre vents de l'esprit“ վերնագրով բանաստեղծու

թութիւնները զժբաղըբար զուրկ են այն բնական պարզութիւնից, որ ճշմարիտ դազանդի յատկութիւնն է: Այսու ամենայնիւ նորա մէջ կան շատ սքանչելի տեղեր, որ յիշեցնում են երևելի բանաստեղծի առաջին գրուածները:

Որովհետեւ „Հայկազնեան Տարեգրի“ մէջ ապագրուած Փարիզից թղթակցութիւնն նկարագրում է Հիւզոյի վերոյիշեալ յօդիւնները, ուստի մենք աւելորդ չ'համարեցինք ապագրել այս տետրիս մէջ նաև նորա պատկերը:

Մ Ա Տ Ե Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

„Անտն Սրբոյ Մկրտութեան ըստ կարգաւորութեան Հայկական Ուղղափառ եկեղեցւոյ և խոստովանութիւն Հաւատոյ 'ի Ներսիսէ Շնորհաւոյ և թղթակցութիւնք նորին ընդ ինքնակալին Յունաց Մանուէլի ծիրանածին Ամեննորի և Միքայէլի Տիեզերական Պատրիարքի Թարգմանեց 'ի Հայկական 'ի Հելլեն բարբառ Տիմիթրիոս Ի Խ Չօլաքեան. Կ. Պօլիս, տպագրութիւն Արամեան. 1881“:

Նորերումն հրատարակուեցաւ 'ի Կ. Պօլիս Հայերէն և Հելլեն բարբառով Պ. Տիմիթրիոս Չօլաքեանի մի յոյժ գեղեցիկ և յոյժ օգտակար երկասիրութիւնը, որոյ ամբողջ վերնագիրն ընդօրինակեցինք վերևում:

Պ. Չօլաքեանի երկասիրութիւնը անսարակոյս մեծ նշանակութիւն պիտի ունենայ նոցա առաջև, որք միշտ հետաքրքրվում են եկեղեցական, կրօնական և բանասիրական այսպիսի գրուածներով և նիւթերով: Ասենք Պօլսոյ Յունարէն Նեոլոգոս լրագրի կարծիքը այս գրքի մասին.

„Պ. Տ. Չօլաքեանի ըստ ամենայնի կարևոր և նոր գործն, ասում է Յոյն լրագիրն, մեծ պատիւ կը բերէ թէ՛ աշխատասիրողն և թէ՛ մեր համազգի հասարակութեան, որ ուշ ուշով ընթեռնելով նորան, կարող է այսուհետև ոտնակոխ անել 'ի տգիտութենէ ծագած նախապաշարումները, որոնք՝ որոմների նման՝ խառնուելով հին ժամանակ-

ների աստուածաբանական աւելորդ անըզբանութեանց, հերձուածներ առաջ բերան, և եղբայր ազգերը բաժանեցին. ազգերը, որոնք նախ քան Վրիստանէութիւն մաքառած չէին

բնաւ մեկմեկու հետ, և որոնք՝ որպէս կրթութիւն սահմանեալ էին սիրոյ Աւետարանին գալուստէն յետոյ մարտնչել մեկմեկու հետ այնպիսի գաղափարների համար, որոնք դարուց 'ի դարս մնացել են և պիտի մնան յաւիտեան: Այսօր ամենքս զարմանում ենք՝ Հայք և ուրիշ Ուղղափառք, թէ որպիսի այլանդակ պատճառով չենք միացեալ, մինչ դեռ միջնորմ չենք տեսնում մէջ տեղում, իբր որեւիցէ պատճառ, և եղածն ևս փտած և ոչինչ բան է: Մեր Հայ եղբայրքը կարծվում էին մինչև ցայժմ իբրև դաւանողք զ'ի Բնութիւն, սակայն այս հակառակամարտ վէճի մէջ նրբութիւն կայ, որ մինչև ցայժմ ևս ոչ աստուածաբանական հանձարն և ոչ ևս զբաբանութիւնք կարող չեղան բացատրել այս նրբութեան մեկնիչ սահմանները, և բաժանումը՝ թէպէտ և կայ՝ սակայն բոլորովին անհասկանալի է նոցա, որոնք իրերը քննում են պատմական, գործնական և դրական և աւետարանական օգտակար տեսակէտով“:



Գ. ԱՐՄԻՆԻ
ԽՏԷՆ ՀՐԱՊ. ՄՂԱԿԷՆ
(Պատկերանկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)
Г. АРМИНИ.
Ред.-Изд. „Мусака“

Մատենա նուիրուած է Ա. Կ. Տիմիթրիոս Տիմիթրիոսի և Սրբազան Ներսիս Արժապետեան Հայոց Պատրիարքին Կ. Պօլսոյ:

ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ՏԱՐԵԳԻՐ

ԱԶԳԱՑԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ Պրն 10 Յուլի 1881

Մեր ազգային-քաղաքական վիճակն յոյժ փափուկ է հիմա: Բարենորոգմանց խնդրոյն առթիւ եղած ջանքերն և մանաւանդ եռանդոտ գլուխներու կողմէ ասա և անդ տեղի ունեցած անզէպ թէ և անմեղ ցոյցերն երկու տարիէ 'ի վեր մեծ կասկածներ յարուցած են ազգին զէմ: Այդ կասկածներ կրնան անհիմն լինիլ. արդէն, կասկածի մը բնութիւնն է անստոյգ լինիլ, և երբ անստուգութեան սահմաններէն ներս մտնենք, ամեն ենթադրութիւն կարելի է: Բայց թէ կասկածներ կան, այս է զխաւոր իրողութիւնը զոր պարտինք 'ի նկատ առնուլ, այս է, կ'ուզենք ըսել, զժբաղդութիւնն որ դարման կը պահանջէ: Ասկածներն որք կ'զգացունին ազգին և մանաւանդ զործիչ մարմիններուն զէմ, աւելի մեծ և բազմադիմի վնասներ կ'արտադրեն քան որչափ չկարծուիր ընդհանրապէս: Մեր վարչական մեքենային գլխաւոր անիւներէն մի քանին Բ. Ղրան մահիկին տակէ կ'անցնին, և այդ անիւներ գրէթէ ամբողջապէս դադրած են գործելէ: Ազգն ունի բազմաթիւ կարեւոր գործեր որոց համար Պատրիարքարանը կը պարտի միջնորդել կայսերական կառավարութեան քով. զի, հակառակ թուրք մամլոյն ճգանց, որ կ'ուզէր ամեն քաղաքային իրաւասութենէ զրկել Պատրիարքարանն, իրաց բնական կարգն իսկ այնպէս կը պահանջէ որ կենաց այդպիսի միջնորդ մի, և սա կեցած է և պիտի մնայ միշտ: Ղուցէ չենք սխալի պնդելով, նախ, թէ մեր ազգային քաղաքականութեան մի գլխաւոր տարրը պարտ էր լինիլ կարելի եղածին չափ ազգեցիկ դիրքի մը բերել այդ միջնորդութիւն. աշխատիլ այն մտօք որ կայսերական կառավարութիւնն չայոց Պատրիարքարանին կողմէ իւր ուշադրութեան ներկայացնալ գործերը գոհացուցիչ կերպիւ անօրինակու հարկն զգայ, և ոչ թէ շահաւոր գանէ տկարացնել ազգային իշխանութեան ազգեցութիւնն, այնչափ կարեւորութիւն չտալով գործոց: Այս քաղաքականութիւն, հակառակ հովերու մէջ զեկավարելու կոչուած վարչութեան մը համար, անշուշտ մեծ դժուարութիւններ ունի. բայց մեծագոյն վարիչներն ու քաղաքագէտներն անոնք եղած են որք այսպիսի դժուարին կացութեանց մէջ ուղղութիւն մը գրտնելու և բուն նպատակին հասնելու կը յաջողին: Առ այժմ, ցաւով կը տեսնենք որ այսպէս չէ բուրրովին. — մեր թագրիւններն, որք արդէն յաջող

արդիւնքներով չէին փայլիլ յաջողագոյն տարիներու մէջ, փոխանակ, վերջին տարիներու զէպբերուն վրայ, ևս առաւել կարեւորութիւն ստանալու, իբրև արտայայտութիւնք օրինաւոր բաղձանաց ազգի մը որ ուշադրութիւն կը գրաւէր, ընդհակառակն ևս առաւել կորուսած լինիլ կը թուին իրենց ոյժն. և այնպիսի պարագայից մէջ, յորս գաւառք ընդհանրապէս և 'ի մասնաւորի հայաբնակ գաւառք մեծամեծ պէպեր ունին, յորս բազում օրինաւոր խնդիրներու համար մեր Պատրիարքարանը կրնայ օրինաւորապէս դիմել առ Բ. Ղուռն, ցաւալի է տեսնել որ այդ թագրիւններ գրկուած լինիլ կը թուին այն ներքին հրապոյրէ որ անոնց մեծագոյն զօրութիւնը կը կազմէր: Այսպէս, անխնամ կը մնան գաւառական բազմաթիւ կարեւոր գործեր. գոհացում չեն կրնար ստանալ այլ և այլ օրինաւոր պէպեր, կը զոհուին թանկագին նիւթական շահեր. և այս ուղղակի վնաս, որ բաւական ակներև է ինքնին, կ'արտադրէ մի ուրիշ վնաս, անուղղակի, որ զժբաղդաբար, ըստ բաւականին ուշադրութիւն չը գրաւեր տակաւին. — Գաւառական ժողովուրդը կ'սկսի տարակուսիլ Պատրիարքարանի միջնորդութեան արժէքին վրայ. Պատրիարքարանն իւր օրինաւոր և պիտանի ազգեցութիւնը կը կորսնցունէ գաւառաց մէջ, և նոքա, որք Պատրիարքարանի ճանքով Բ. Ղուռն ելնելու վարժուած էին, կը փորձուին փորձել թէ ուրիշ ճանքայ մը չեն կրնար արդեօք բռնել: Շատ բացօթ չենք խօսիր այս էական կէտի վրայ, զոր ազգային քաղաքագիտաց նկատուածութեան ներկայելով կը բաւականանանք. „Caveant Consules.“ — Մեր ջապէս, ո՛ր և է գործի համար, ինչ աստիճանի կարեւորութիւն ալ ունենայ, Պատրիարքարանին Բ. Ղրան հետ յարաբերութիւնները կը բաղին կարգ մ'ընդդիմութեանց, որք յաճախ կրաւորական են, բայց ոչ նուազ ազգեցիկ: Այս դժուարութիւնք այնքան նուրբ են որ Պատրիարքարանը միայն կրնայ վնասաւել զայնս ըստ արժանւոյն. բայց երբեմն այնքան մեծ են, որ մէք իսկ — դուրսի ժողովուրդը — մեր ոչ այնչափ նուրբ մտքով վերահասու կը լինինք իրաց ընթացքին, ու կը վշտանանք: Գաւառաց մէջ, տեսարանն աւելի հրահանգալից է, ըստ որում իրողութիւնք աւելի պարզ վիճակի մէջ կը ներկայանան հոն: Թողունք այն կէտը թէ գաւառաց մէջ ալ

առաջնորդութիւնը տեղական իշխանութեանց քով կորուսած լինիլ կը թուին իրենց ազգեցորթիւնը դրեթէ այն համեմատութեամբ որով Պատրիարքարանը զիւրն կորուսած է կեդրոնական իշխանութեան քով. այդչափը բնական է դրեթէ: Բայց ահա, տեղական իշխանութեանց կասկածներուն պատճառաւ, անհասանք կը մնասուին. ձերբակալութիւն, բանտարկութիւն, նեղութիւն, մին քան զմիւսն աւելի անհանգստացուցիչ զգուշութիւնը, հսկողութիւնը, քննութիւնը, դժուարութիւններ, արգելքներ, պատուարներ, որք հասարակութեան բարոյական շահերուն զպչելէ շատ աւելի կը զպչին անոր նիւթական և (բառին տառական իմաստով) կենսական շահուց: Ամենէն օրինաւոր աշխատութիւններն անգամ այս կամ այն կողմէ այս կամ այն տեսակ մի սեղմումի ենթարկուած են, և կասկածանաց ասպարէզը բաւական ընդարձակ է եկեղեցեաց նախագահութիւններէն մինչև վաճառանոցներու ներսերը տարածուելու համար. բաւական խիստ են ամեն կարգէ ու տեսակէ հակերու, սնտուկներու, տուպրակներու մէջ մտնելու համար:

Երբ, աւելի զիւրին է նկարագրել զէշ վիճակ մը, քան թէ իրական մի դարման տառադարկել: Արնդունինք յօժարակամ թէ ազգային վարչութիւնը շատ անգամ գործ ունի այնպիսի տրամադրութեանց հետ որոց վրայ չկրնար ազդեցութիւն բանեցնել. մանաւանդ թէ գիտնէք որ իրաց այս վիճակին համար միայն Պատրիարքարանը չէ պատասխանատու, այլ ուրիշ պատասխանատուներ ալ կան, որոց մին է մասնաւոր պարագայներու պահանջումը: Սակայն կը համարձակինք կարծել թէ բնութիւնն իսկ չարեաց, զորմէ կը զանգատինք, մտաբերել կու տայ ինչ ինչ դարմանիչ միջոցներ: Եթէ կ'ընդունուի թէ պատասխանատուութեանց գոնէ երրորդ մասը մեր ազգային իշխանութեանց վրայ կ'իյնայ, պատճառ մը չկայ չաշխատելու որ գոնէ այդ կէտը դարմանենք: Պէտք է միջոցներ խորհիլ ազգային յարաբերութեանց ձգտեալ և գրեթէ կ'ծու վիճակը գոնէ մասամբ մեղմացնելու:

(Մատն)

համար: Քաղաքագիտական հանձարը զուր-գործողներ ունի առ մեզ. և չեն պակսիր նրբամիտներ այդ յատակագիծն 'ի գործ դնելու համար: Ամեն բանէ վեր, պէտք է զգուշանալ կասկածանաց առիթ կամ գոնէ պատրուակ ապէ. կարելի է գտնուին այնպիսիք որք պատրուակներով ալ գոհ լինին, զի կը յուսան օգուտ քաղել այն կասկածներէ որք պիտի հիմնուին այդ պատրուակներու վրայ: Պէտք է կատարելապէս «-դէշ ընթացք մը բռնել, բառին զիւրանագիտական առմամբ: Մնաց որ, մէք զիւրանագիտութեան ալ շատ պէտք չունինք. մեր գործերը բաւական պարզ բաներ են, և քիչ մը անկեղծութիւն, քիչ մ'ալ, եթէ հնար է, ողջմտութիւն, կը բաւեն շատ դժուարութիւններէ ազատելու զմեզ: Մասնաւորապէս հսկողութիւն պէտք է ընել գաւառացի ազգայնոց գործերուն վրայ. պէտք է խնամով զգուշացնել զանոնք փուճ տեղը կասկածանաց առարկայ լինելէ. յախուռն և անխոհմ հմ Եռաջնորդներու նկատմամբ ամենէն կորուկ ընթացքը պէտք է բռնել, որպէս զի շատ անմեղներ մեղաւորի մը կրակովը չայրին: Չանազան ընկերութիւններն ու մարմիններն ալ պարտին նոյն ազգասիրական ընթացքը բռնել իրենց այն գործակալներուն, ներկայացուցիչներուն և ուսուցիչներուն նկատմամբ, որք անգիտանան երկրին ու ազգին արդի վիճակն, և սիրեն օգի մէջ սպրիլ և օգով սնանիլ: Երբ կը տեսնենք որ ազգին զէմ յարուցուած կասկածներն, որքան ալ անհիմն և անտեղի լինին, մինչև անգամ բարենորոգմանց ծրագրերու մէջ տեղ կը գտնեն և 'ի դրութիւն կը փոխարկուին մեր ազգասիրական պարտքն է մեր բոլոր ոյժով մաքառիլ այդ նոր չարիքի զէմ: Եթէ բարենորոգմանց խնդրոյն մէջ պաշտօն մը պիտի կատարէինք, շատոնց կատարած լինցուցած ենք այդ պաշտօն. յայտնած ենք մեր օրինաւոր պէտքերն ու բաղձանքներն: Հիմա, մեր ազգային քաղաքականութեան նպատակը պարտի լինիլ վերցունել ինչ նոր տեսակ արգելքներ, որք բնականաբար անհնար կ'ընեն այդ բաղձանաց իրականացումը:

Ք.

Կ. Պոլս, 20 Յունիս 1881.

Ի՞նչ որ կամին թող մտածեն ոմանք, ինչ որ կարող են թող գործեն, այսուհետև մեզ համար ստացեալ մի իւրականութիւն կայ: Երեզական ներքև, աշխարհի մակերևոյթի վերայ, ուրիշ հողերէ չըզպատեալ մի հող կայ որու ԵՐՄԵՆԵԱՅ կ'ասեն, և այն հողի վերայ կամ անտի սերեալ մի խումբ մարդիկ կան, որոց ՀԱՅ անունն կրտան:

Այս ամենաբնական եղելութիւնն ինչպէս մինչև ցայժմ, միջազգային տեսակէտով, խնդրոյ ներքև մնացել էր և ինչ անակնկալ հրաշքով երևան ելաւ: Այդ հարցերն քննելու

ոչ ժամանակն է այժմ և ոչ գեռ առիթն պատէհ: Իսկ է մեզ առժաման համոզուած մնալ՝ որ մեր գործունէութեան սկզբնաւորութիւնն այս օրէն պէտք է հաշուիմք:

Հայ ազգին վերածնունդն ինդրելու փորձեր կը լինին արդէն, անգոր և անխորհուրդ փորձեր, զորս ոչնչացնելու համար պատրաստ պէտք է գտնուիմք սակայն: Օրհասական հիւանդն նորածին մանկան ճիչերէն չախորժիր: Սա մի հասկանալի զգացում է զառամեալ ազգաց համար, որք դժգոհութեամբ կը տեսնեն ուրիշներն, ժիր և առոյգ, դալ իւրեանց հացն ու օդն ժառանգել:

Այս միջոցին պէտք է փութամք, կորուսեալ ժամանակն լրացնելու համար, մի հոծ մարմին կազմել բարոյապէս, քանզի նիւթականէն ո՛չ նուազ սա պիտանի է, մանաւանդ մեզ: Թուրք լրագիրք կառաջարկեն չայ ժողովուրդն կիսել և նորա երկու մասունքն անջատել 'ի միմեանց որպէս զի սորա առանձինն ջլատին: Թուրքիոյ մէջ որքան վատ և յիմար մի կարծիք յայտնէ որ, միշտ բարձրագոյն շրջաններն ունկնդիրներ կը գտնէ: Ուրեմն նորա ևս զգացել են թէ Ռուսիաբնակ և Թուրքիաբնակ չայոցս մտաւորական համերաշխութիւնն, ազգային վերաշինութեանն նպաստող մի գործը միջոց է: Ուրեմն՝ այդ համերաշխութեան որքան թանկագին լինելն առաւել ևս պէտք է զգամք մեր այս ժամուս և ըստ այնմ գործեմք:

* *

Ռուսիաբնակ և Թուրքիաբնակ չայերն երկու գլխաւոր մասունքն են որք զչայ ժողովուրդն կը կազմեն և որոց թիւն, թէպէտ այս տեղ գերազանցող, սակայն, ծանօթ պատճառներով, հաւասարելու կրննանայ: Այս երկու մասերու մէջ, ազգային միութեան տեսակէտով, քանի որ սոսկ կրօնական միութիւնն բաւական չը լինիլն ստուգուեցան, հարկ է որ այժմ սերտ և անկեղծ տարբեր յարաբերութիւնք հաստատին:

Արկու տէրութեանց հպատակ չայերն իւրեանց մասնաւորեալ յատկութիւններն ունին, ինչպէս և թերութիւններն:

Աթէ մի կողմ դրամական տաղնապ կայ, միւս կողմն նիւթական կեանքն աւելի երաշխաւորեալ է:

Աթէ մի կողմն աւելի եռանդ կայ՝ քան թէ յարատուութիւն, միւս կողմի խոհականութիւնն և հաստամտութիւնն կը գան շարունակ այդ եռանդն չափաւորելու: Ա՛րջապէս յառաջագիմութեան համար պէտք եղած բազմաթիւ հանգամանքներն, որք այս տեղ կամ այդ տեղ կը գտնուին, հնար կը լինի փոխանակարար միացնել: Անհրաժեշտ պէտք կայ ուրեմն որ բաց 'ի կրօնականէն, յարաբերութեանց համար աւելի դրական միջոցներ ունենամք:

* *

Այս միջոցներէն հզորագոյնն, հարկ է ասել, թէ պարբերական մամուլն կարող է լինիլ: Ո՛չ այն մամուլն որ ունի սոսկ քաղաքական դիտումներ, ո՛չ այն մամուլն որ

աւելի օտարին գործոց և շարժմանց հետ կ'ըզաղի քան մեր ցաւոցն հետ, ո՛չ այն մամուլն որ անձնական շահուց և պախարակելի կրից և եթ մի գործիք է դարձել, այլ այն որ կարող է կատարելապէս ազգային հոգին և ձգտումներն ցոլացնել իւր մէջ, ժողովրդին կենսական պէտքերն երևան հանել պատէհ ժամանակին, և լրջօրէն, առանց չափազանցութեան, բայց նաև առանց փաղաքանաց յայտ առնուլ ազգային էական վիճակն, քննադատել գործող մարմիններու ուղղութիւնն, քաջալերելով ի՛նչ որ արժանի է քաջալերութեան և անաչառապէս պարսաւելով ինչ որ խաբէութիւն է:

Ինչպէս իտալական ղիզբոնոն, կենսական պահանջներու պատկերներն ըմբռնած, ժողովրդեան սրբի հետ խօսելու կարողութիւն, սխալեցնող և բարոյականացող պրոպեգանդիստ, ահա՛ սորա են մեր անհրաժեշտ պահանջածն ժամանակակից հայ մամուլէն, ընդհանուր չայոց յառաջագիմութեան նպաստելու և ընդգրկման կապն ամրապնդելու համար:

Թուրքիոյ և Ռուսիոյ հայ լրագիրք և հանդէսք, պէտք չէ՛ երբէք կասկած ունենան միմեանց դիտաւորութեանց վերայ: Ղշմարիտ է առածն՝ թէ «Աշտոտ լաթն ընտանիքին մէջ պէտք է լուանալ»¹: բայց վայրկեան մի ևս մոռանալու չեմք՝ թէ սահմանաց երկու կողմն մի և նոյն ընտանիքն, մի և նոյն ծնողաց որդիքն են որք կը բնակին, և կողմնակի քննադատութիւնք անձնատիրութեանց՝ բաղխելով պէտք չէ՛ սրտմտութիւն պատճառեն, իբր թէ մի օտար է կած լինէին:


Ազգային յառաջագիմութեան համար գլխաւոր արգելներէն մին է հասարակաց կարծեաց բացակայութիւնն: Այս հասարակաց կարծիքն է որոյ առաջն անհեթեթ գաղափարներն, շահամոլ ձգտումներն և պղծալի կիրքերն կը կասին: Պարբերական մամուլն եթէ վերցիլչեալ յատկութիւններով փայլի, այն աստե՛ն կարող կը լինի այդ հասարակաց դրամագլուխն գոյացնել և հաստատել միանգամայն իմբպրաիան հատերաշխութիւնն որ այժմ ամբողջապէս կը պակասի մեր մէջ: Ետեւելի ճանապարհիս նկատմամբ կարող է մէն մի լրագիր կամ հանդէս տարբերիլ միւսէն, բայց երբէք ազգային բարօրութեան մասին մի ծառայութիւն մատուցած չեն լինիր, ո՛չ մին և ո՛չ միւսն, եթէ անընդհատ և միմիայն այս բարօրութիւնն իւրեանց նպատակ չունենան: Աթէ ազգային լրագրութիւնն խմբովին



X

չունի գեռ այն վարկն և կարևորութիւնն որ այնքան պիտանի է, նոյն իսկ իւր շահերուն, սորա ամենամեծ պատճառներէն մին այն է, որ շատերուն համար, առ 'ի չգոյէ վերոյիշեալ յատկութեանց, լոկ անձնականութեանց ասպարէզ է նա: Թուրքիոյ հայ լրագրութեան մէջ, այս թերութիւնն գուցէ առաւել զգալի լինի: Այս վայրկեանիս իսկ կը տեսնեմք մեր Ռուսիարնակ արևնակիցներէն միոյն գրչէն ելած ազգագուտ և բարձր խորհրդածութիւններն և անշահատէր ազգարարութիւններն, գործող մարմիններուն նկատմամբ, փոխանակ շնորհակալիք կամ գոնէ ազատ քննադատութիւն յառաջ բերելու, զայնս արտադրող պատուաւոր անձին վերայ լուսամբ տեղացուց մի թերթ: Այժմէ այդ անձն չը լինէր այնքան անձնուրաց և թշնամանքն անարգող, պէտք էր որ վճատեալ քաշուէր բէմին վերայէն, չսպասելով այն համակրական ջատագովութեանց, որք սկսան, թէպէտ ուշ, ամեն կողմանէ հասնիլ իրեն: Սա մի ուրախալի և թարմ երևոյթ է, որ կը յուսամք յարատե պիտի լինի:

Անձնականութիւնը միանգամ ընդ միշտ պէտք է ուրեմն 'ի բաց մնան հայ լրագրութենէն: Աջմտութիւնն և պարկեշտութիւնն նորա գլխաւոր յատկանիշներն պէտք է լինին: Ամենէն ուամիկ ընթերցողն մի օր տաղակութիւն կ'զգայ նաև պերճախօս զրարանութիւններէ: Օրագիրք եթէ փոխազարձ յարգել գիտնան միմեանց գաղափարներն, եթէ համերաշխ լինին միմեանց հետ, եթէ վերջապէս ունենան այս յատկութիւններս որ վերև յիշեցաք, այն ժամանակ միայն ազգուապէս կը նպաստեն ամբողջ հայութեան 'ի մի ձուլուելուն: Այն ժամանակ թէ 'ի Ռուսիայ և թէ 'ի Թուրքիայ հրատարակուած թերթերն հետեւելով ոմանց շաղին, զորս կողմնակից չերևելու համար չը կարեմք անուանել, մի հզօր և հաստատուն յօդ կը լինին երկու կողմի ազգայններուն կենսական և բարձր շահերու մէջ, միմեանց պիտոյից թերին լցնելու պատրաստ, ջանքերն 'ի յարատևութիւն քաջալերող, միմեանց խորհուրդներ ներշնչող: Աւ երբ մերթ ընդ մերթ թշուառութեան նոր հարուածներն մի կողմին վերայ կը հասնին, միւս կողմն նորա զօրաւոր մի սփոփան և նեցուկ կը լինի:



ՎԻԿՏՈՐ ՀԻԿՊՕ | ВИКТОРЬ ГЮГО.
(Պատկերը նկարեցաւ և փորագրեցաւ յատուկ մեր հանդիսի համար)

Ազգին բարոյական միութեան մասին կարեն նաև օգնել մասնաւոր անձանց փոխադարձ այցելութիւններն: Անդամի քարոզութիւնն մամլոյ հաւասար ազգու է մտաւորական կապակցութեանց համար: Ո՛չ աստ և ո՛չ այդ տեղ կալմակերպեալ մարմիններ չեն պակասիր: Սոցա մօտ Հայերն կարող են գնալ և 'ի մօտոյ ծանօթանալ, ուսումնասիրել, քաջալերել իսկ մէն մի մարմնոյն ընթացքն և դատնալ պատմել ինչ որ անաչառապէս ստուգեցին:

Երկու երկիրներու մէջ երթևեկութիւնը անընդհատ կը լինին այժմ, բայց ամեն ճանապարհորդ ո՛չ միայն այդ պաշտօնին համար հարկ եղած ընդունակութիւնն չը կարէ ունենալ միշտ, այլև դատողութիւնն խիստ նեղ և միակողմանի կարող է լինիլ,

վասն զի անհատականութեանց մէջ նկատած ձիրքերն և մանաւանդ թերութիւններն ընդհանրացնելու վտանգին մէջ կ'անկնի շատ անգամ: Մի ուսմարնակ պարօն, յորմէ կը կարծէր ամեն որ մի ուղիղ գաղափար ստանալ Պօլսեցի Հայոց վերայ, անցեալ տարի Տփլիս կը դառնայ և հարցուփորձ աւնող ծանօթներուն: «Աս Պօլիս մարդ չը տեսայ» կը պատասխանէ: Գուցէ Պօլսեցի մի Հայ նոյնն կրկնէ գալ տարի Տփլիսեցի Հայոց համար, գոհանալով միմիայն թեթև և անլուրջ յարաբերութիւններէ: Այս պատճառաւ վատ չը լինիր կարծեմք որ մերթ, դիտող, ազ-

գին վտաահութիւնն և համակրութիւնն վայելող մասնագէտ անձինք ինքնակամ յանձն առնուն կամ մասնաւոր պաշտօն ստանան գնալ այցելել փոխադարձաբար Ռուսիոյ և Թուրքիոյ Հայերն, զիսաւորապէս ազգային հաստատութեանց և գործոց ընթացքն քննելու նպատակաւ:

Իսկ է միայն այս կերպ յարաբերութեանց պէտքն յիշել և զայնս իրակացնելով անտի ծագած բարիքներն ամեն որ կարէ մակարերել:

Ազգային վերածնութեան ամենէն աւելի խոչնդոտ եղած մի խնդիր այս օրերս կրկին մտաւտանջութեան առարկայ եղաւ: Պանդխտութեանց վերայ կ'ուզեմք խօսիլ: Թուանշաններն ամեն բանէ աւելի համոզիչ են և Պ. Գ. Նիկո-

ղոտեան թիւերու վերայ յենեալ իւր ազդու գրչովն եկաւ միւսանգամ աղաղակ բառնալ: Սորա արձագանքն մեծ եղաւ թէ՛ աստ և թէ՛ ՚ի ուստահայս: Այն կորստարեւր և չարաբախտ պանդխտութիւնն որ կանեն անընդհատ խումբ խումբ գաւառացի Հայ երիտասարդք, թողլով Տոհմն ու արտն անինամ, կանայք և որդիք անպաշտպան, և կըզնան գլխաւոր կեդրոններն աշխատիլ անինայ, այն է՝ ահա Հայաստանի ուտիչ և դժուարարուժելի վերքն: Սրա քաղաքաց մայթերուն վերայ, օտարին կոպտութեանց առջև խոնարհած, իբրև ստրուկ և չորքոտանի կաշխատին ամեն զրկանք տանելով, և եթէ հիւժեալ և ապականեալ ոսկերութիւններն չը թողուն այն տեղ, ինչպէս շատերն կը տեսնեմք, կը դառնան իւրեանց հայրենիքն բեկեալ և անկարող, միշտ ձեռնուռայն և աղքատ: Այլ սոցա կը յաջորդեն գուցէ առջիններէն աւելի բաղդաւոր լինելու յոյսով, մինչդեռ նոցա կանայքն անբեղուն կը մնան անդ երկարատև տարիներ: Այսպէսով մէն մի տասն տարուան միջոցի մէջ, կը գոչէր Պ. Պ. Նիկողոսեան, 250,000 առողջ երիտասարդաց հայրենիքէն բացակայութեամբն, Հայն մի միլիոն մարդ կորուսանելու վերայ է:

Բայց լոկ էութիւն հաստատելն չէ՛ հերիք, եթէ նորա խակական պատճառներն չը քննուին և նոցա դարմաններուն վերայ չը մտածուին:

Հայաստանցիին պանդխտութեան գլխաւոր շարժառիթներն բաղմատեսակ և անխուսափելի են կասեն: Վասն՝ հողագործութեան և արհեստից Հայաստանի մէջ փոխանակութեանց համար անկատար և անբաւական լինիլն, և ապա ընչից անապահովութիւնն, հարստահարութիւնը, ծանր հարկերն, աղքատութիւնն և վաշխառուներու պահանջներն:

Եթէ սխալմամբ բաղդատեմք Արոպիոյ հողագործն և արհեստարն մերիներուն հետ, առաջին պատճառն իրաւացի կարէ երևիլ: Բայց Հայն տարբեր հանգամանաց մէջ է տակաւին: Վա իւր նախնական մշակութենէն և արհեստէն ուրիշ բան պէտք չէ խնդրէ՝ եթէ ոչ բաղդատաբար մի դիւրակեցիկ կեանք, իրեն և իրեններուն, այն կեանքն որ կը վայելեն այժմ փոքր Ասիոյ մի քանի դիւրեր և քաղաքներ: Հայաստանի ոչ բարենորոգմունք իրականացած են և ոչ արուեստագիտական (technique) նախնական կրթութիւնն յառաջացած է, որ Հայ դիւրացին իւր առօրեայ ապրուստէն զատ կարողանայ արտադրածն դրամի հետ փոխանակել և հարստանալ: Այդ մի ժամանակի խնդիր է, որ աստն հանգամանքներն փոխուելով, նա իսկ պիտի փոխէ իւր մշակութեան եղանակն:

Եթէ ընչից անապահովութիւն, եթէ հարստահարութիւնք են զՀայն իւր երկրէն դուրս վանողն, մէն մի ընտանիքի որդի գոցա վերջ դրած չը լինիր իւր հեռանալովն և իւր անձն միայն հարստահարութիւններէ ազատած կը լինի, թողելով իւր որդիքն, իւր ամուսինն, ծեր հայրն և մայրն, ևս քան զէս անպաշտպան:

Եթէ կառավարութեան ծանր հարկերն անտանելի լինելով՝ Հայն պանդխտութեամբ այդ հարկերն վճարել կը յուսայ, այլանուն և նորանոր հարկեր կապասեն իրեն քաղաքին մէջ: Քաղաքաց Հայ պանդուխտ աշխատաւորք, որ ոչ ամառն հանգիստ ունին ոչ ձմեռն, իւրեանց աննշան վաստակին փոխարէն ամենածանր տուրքերու ենթարկեալ են, և անդ ևս մի քանի կեղեքիչներու իշխանութեան ներքև

կը գանուին, որք հայրենիքի հարստահարիչներէն պակաս չեն կողպտեր:

Եթէ գաւառաց վաշխառուներուն պահանջմունքներն են որք կստիպեն զՀայ մշակն կամ արհեստարն երթալ աշխատիլ մայրաքաղաքի մէջ կամ այլուր որ հարիւրապատիկ տոկոսով իւր պարտքն վճարէ, այն քաղաքներու մէջ գրտնուած աւելի անողորմ և աւելի խորամանկ վաշխառուներու ճիրանին մէջ կանկնի, որք փոխանակագրերու առուտուրի պատրուակաւ հազարաւոր պանդուխտներ իբրև ստրուկ քաղաքաց մէջ կը բանեցնեն որքան ատեն որ կամին:

Այսպէս ուրեմն Հայ վարձկանն, Հայ բեռնակիրն, իւր սիրելիներէն զուրկ, քաղաքաց նեխեալ մանուրափ մէջ կը նուաղէ իւր մարմինն, և սիրան ու հոգին կապականէ: Ապագան անորոշ և պարաբերն անվճար կը մնան միշտ և նա կրկին անգամ չքաւոր և թշուառ կը վերադառնայ իւր հայրենիքն... եթէ ողջ մնայ մինչև այն ատեն:

Բացառութիւններ կարելի է գտնել: Բայց ընդհանրապէս ո՛վ կարող է ասել թէ պանդխտութենէ դարձող Հայն, իւր հետ դիւրակեցութիւն կը բերէ իւր ընտանեացն և սերունդին: Եթէ այնպէս լինէր ՚ի սկզբանէ, պանդուխտներուն թիւն օր քան զօր պակասիլ պէտք էր և ամենքս քաջ գիտեմք որ նորա հակառակն տեղի կունենայ:

Եթէ վերոյիշեալ բոլոր շարժառիթներն, որք կան իսկապէս, պանդխտութիւնն չէ՛ կարող անհետացնել կամ մեղմել, ի՞նչ է ուրեմն որ Հայաստանցին կը շարունակէ միշտ գնալ հեռի իւր բաղդն խնդրելու: Մէք այնպէս կը կարծեմք՝ թէ գաւառացի Հայն մի խաբուսիկ հոսանքէ յափշտակուած կրն՞թանայ յաջորդաբար, առանց նորա հաւանական հետեանքն տեսնելու: Աւ այնքան բուռն կերակի այդ հոսանքն, որ անթիւ ձեռնուռայն դարձողներուն կորստական վիճակն այլոց խրատ չէ՛ կարող լինիլ: Պանդխտութեան գնալն մի աւանդական սովորութիւն է դարձել գաւառացի Հայուն, գլխաւորապէս մի քանի նահանգներու և գիւղերու մէջ, որ որոշեալ մի ժամանակ հայրենիքէն հեռանալն անհրաժեշտ մի պարտաւորութիւն համարուած է, Արուսաղէմ ուխտի գնալու պէս: Աղբոնական քաղաքաց անունն մի մասնաւոր հրապոյր ունի միշտ գաւառացիին համար:

Պիւղացի Հայուն ոչ որ տակաւին ցոյց տուած է թէ ո՞րքան անխոհեմ, ո՞րքան աննախատես և ո՞րքան վնասաբեր է իւր այս վարմունքն: Առքա որք բարոյականապէս պաշտօն ունին խրատելու ժողովուրդն այս մասին, անհողութեամբ կամ անմտութեամբ թողլ կը տան գիւղաբնակ երիտասարդներն երթալ հազար և մէկ տառապանք քաշելով, անձամբ համոզուելի հուսկ ուրեմն թէ քաղաքներն հարստութեան աղբիւր չեն և քրտինքն քարի վերայ չէ բեղմնաւոր ինչպէս հողի վերայ: Աւ մինչդեռ ապրիլ և ապրեցնել է միայն իւր փափաքն, լաւագոյն է մնալ իւր սիրելեաց մօտ, քան գնալ մաշել և փոխլ մարմինն քաղաքներու մէջ, զրկելով այսպէս հայրենիքն իւր միլիոնաւոր զակներէն:

Ի՞նչ կարելի է ուրեմն անել Հայաստանէ գաղթողներու մտքէն այս յակումն խլելու համար:

Ընչեց ապահովութեան և հարստահարութեանց մասին կը խօսիմք քիչ վերջն: Բաւական է այժմ գիտնալ թէ սոցա դէմ դնելու համար պանդխտութիւնն ո՛չ միայն մի միջոց չէ բնաւ, այլ և անապահովութիւնն կը ստատականայ, հարստահարութիւնք կը դիւրանան և անիրաւ հարկերու դէմ բողոքող ձայներն կը պակսին եթէ երկիրն իւր ամենէն առոյգ բնակիչներէն զրկուած մնայ:

Բայց մեր կարող եմք գոնէ մասնաւոր անձինք յուզարկել ամեն կողմ, որ գնան քարոզեն *), և եթէ հնար է կասուցանեն այդ մարդկային հեղեղներն որք դէպ 'ի մեծ քաղաքներն կը հոսեն: Յոյց տան նոցա թէ 'ի զուր է իւրեանց այդ զոհողութիւնն և ապագանին անհաստատ, նկարագրելով մայրաքաղաքներու մէջ պանդուխտին սպասող աւելի դառն վիճակն: Ահեղեցականք ևս այս մասին մեծ ազդեցութիւն կարեն ունենալ ժողովրդեան վերայ: Հարկ է միանգամայն որ գաւառաց քաղաքներու և գիւղաքաղաքներու մէջ փոքրիկ դրամատունն հաստատուին, որք ո՛չ միայն շահաւոր կը լինին նոցա հիմնադրաց, այլ և պատշաճ տուկոսով մշակին և արհեստաւորին պէտք եղած դրամն փոխ տալով, սորա կարող կը լինին, հողին վերայ և գործարանին մէջ, նոյն տարին կրկնապատկել զայն: Մասնաւոր մարդիկ, մանաւանդ Ռուսիարենակ ազգային դրամատէրերն,

*) Մեր կը կարծեմք թէ այդ քահանայից և վարդապետաց յատուկ պարտականութիւնն է: Հրատարակելու է:

որք ազգին և իւրեանց փողին շահերն հաւասարապէս կը սիրեն, կարող են այսպէսով մեծ ծառայութիւն մատուցանել այդ խղճելեաց:

Իսկ կենաց և ընչից ապահովութեան, հարստահարութեանց և հարկերուն անիրաւ պահանջմանց մասին, պէտք է որ կառավարութիւնն կամք ունենայ սոցա մի վերջ տալու: Առաւելարութեան այդ ինքնակամ զիջումն յուսալի չէ՛ երբեք: Բայց, գոնէ առ այժմ, մեր Ազգային Աշարհութիւնն չէ՛ կարող մի քանի յաջողակ և բանիրուն փաստաբաններ յուզարկել 'ի Հայաստան, վայելուչ վարձատրութեամբ, որք պաշտօն ունենան կեղեքեալին դասն վարելու: Խորհուրդ տալու, որ այդպիսի փաստաբան լինին: Հարստահարիչն և վաշխառուն իւրեանց վարձեալ փաստաբաններն ամեն տեղ ունին: Ուրեմն ո՞վ պիտի տէր լինի՞ աղքատին, եթէ Ազգային Աշարհութիւնն այդ իրաւագէտներու միջոցով նորա պաշտպան չը կանգնի:

Ահա այս չափն գոնէ կարեմք անել մեր, եթէ բողոքովն ձեռննալ չեմք կամիր մնալ պանդխտութեան մահաբեր հետեւեքներուն առջև: Եթէ գործող մարմիններն զգան այդ չարեաց մեծութիւնն, արդէն բաւական մի գործ արած պիտի լինին. եթէ զայն մեղմելու համար իւրեանց կարողութեանն չափ աշխատին այս ուղղութեամբ, 'ի վաղուց կատարելի պարտքերնիս պիտի լրացնեն:



ՆԱՍԱԿ 'ի ՓԱՐԻՁԷ

Փարիզ. 14 Մարտ. 1881.

Փետրվարի 27-ին Փարիզ անդի ունեցած շքեղ հանդէսը 'ի պատիւ դարուս ամենամեծ բանաստեղծ անմահն Աիլիթոու-Հիւկոյի, մեր սիրելի ազգին համար ալ կարեւոր բաժին մը հանեց, որոյ վասն քանի մը տող «Փարսիզ» մէջ հրատարակուելու փափաքով կը փութամ ուղղել 'ի ցնծութիւն ծշմարիտ և հեռատես հայրենասիրաց:

Հասերու ծանօթ է արդէն որ Աիլիթոու-Հիւկոյ Ալլընի ա'իւր 130 թիւ կը նստի, Լուսինեան Մարիամ Իշխանուհայն ապարանին կից և նոյն իսկ իւր սեպհականութիւնը եղած զեղեցիկ ապարանին մէջ: Այն մերձակայութիւնն մեծ մտերմութիւն պատճառած է այս երկու նշանաւոր ընտանեաց մէջ և երջանիկ եմ բռնուլ խիստ օգտաւէտ Հայոց ազգին համար: Այս կերպիւ անմահ բանաստեղծը մեր վրայօք կատարեալ անզեկութիւն ստացած է և ջեր հաջերմ համակրութիւն գոչացած է մեր սիրելի ազգին համար:

Վերապատիւ խորն սրբազաննալ՝ որոյ գրական հաղուագիւս ձիւրբերը լաւ կը գնահատէ մեծն Աիլիթոու-Հիւկոյ, մանաւանդ նորին սրբազնութեան վերջին անգամ Փարիզ անցուցած ժամանակը՝ 'ի նպատակ Հայաստանի սովորաց, դորաւորապէս ներգործած է յայտմ մասին:

Արդ հանդէսին գործադիր ժողովը ինդրեր էր Հայագրի և հայրենասէր Իշխանուհայն արտօնութիւն, հարիւր տասը նուազածուք զետեղել Լուսինեան ապարանին պարտեզներուն մէջ: Ասեմափայլ Իշխանուհայն ամենայն սիրով ընդունեց այս առաջարկութիւնը: Նոյն կերպի որ Աիլիթոու-Հիւկոյի հանդէսը գրեթէ ամբողջապէս հայկական շքեղ յարկի մը տակ կատարուեցաւ: Լուսինեան ապարանին վանդակեայ երկաթէ դռները ժամը առաւօտեան տասնևմեկէն 'ի վեր բաց էին և բաղմամբիւ ազգայինք և մեծամեծ գաղղկայիք և օտարականք խուռն բաղմութեամբ կը դիմէին անդ և ափական հիւրասիրութեամբ բազկատարած կընդունուէին: Ասիկ զատ պարտիզաց ծառերուն, վանդակայ և պատերուն վրայ խումբ խումբ ժողովրդականք խունեայ էին: Խեղճ կին մ'ալ սանդուխտ մը դրած էր ապարանին մէկ պատին վրայ և ստակով միջին դասու մարդոց վարձու կուտար:

Ասեմափայլ Իշխանուհայն և իւր ամուսինը կատարեալ ազատութիւն տուած էին ժողովրդին ըստ հաճոյից շքեղապիլ, որով ականջովս լսեցի շատերէն թէ «Ահա ազատասէր և ժողովրդասէր արեւմտական ընտանիք մը, ահա Աիլիթոու-Հիւկոյ տան տէր ըլլալու արժանի իշխանական գերպատան մը»: Բայց այս բաւական չէր սեպուած... Մարիամ Իշխանուհայն ժողովուրդին տուած ազատութիւնը, հրախրեց և մեծամեծաց բրած հիւրընկալութիւնը և նուազածուաց բաշխել տուած բմկելիքը բաւական չէր սեպած... անմահ բանաստեղծին պատրաստած էր 'ի նուէր յաւերժայիշատակ իւր ձեռագործ մէկ հրաշակիրա բարձր ամենանուրբ կերպիւ բանուած և պսակներով զարդարուած: Երբ Ա. Գիւիտոն Իշխանը արձաթեայ պնակի մէջ երջանկաւէտ բանաստեղծին մատոյց զայն յանուն Իշխանուհայն, Աիլիթոու-Հիւկոյ սաստիկ յուզեալ և յոյժ զմայրեալ՝ «Ահա, գոչեց, ծշմարիտ Պարիզի մը (Ֆէ) հրաշակիրա» և ձեռքովը Իշխանուհայն համբոյրներ կը զրկէր: Նոյն երեկոյեան ընդունելութեան տակ Ա. Գիւիտոն Իշխանին նուրանոր և սրտագին շնորհակալութիւններ մատուցանելէն ետե Աիլիթոու-Հիւկոյ յանդիցուց. «Ար սիրեմ և կը յարգեմ նաև ձեր արքեպիսկոպոս եղբայրը. նա սյն հաղուագիւս անձերէն մին է՝ որոնց բերկրութեամբ տուած եմ իմ բարեկամութիւնս: Միշտ երջանիկ պիտի ըլլամ՝ օգտակար լինիլ թէ իրեն և թէ՛ իրեն հոգեւոր հովուութեան յանձնուած ժողովուրդին՝ որ կը սիրէ, կը պատուէ և կը գնահատէ զինքը»: Փարիզու Հայ գաղթականութեան ներկայացուցիչը չափազանց գոհ եղան այս անուղղակի և անյուսալի ազգային հանդէսէն և իրենց խորին շնորհակալութիւնները յայտնեցին Լուսինեան հայրենասէր գերզաստանին: Շատ մը օրագիրք՝ ընդ որս Բոսնիէ պի-Սոսա-Բլիճնման և Ալեք այս առթիւ Լուսինեան ընտանեաց շատ մը գրուատիք հրատարակեցին:

Ար փութամ նաև իմացնել՝ որ Ասեմափայլ Մարիամ Իշխանուհայն ամսոյս 19-ին ալ մէկ նոր նուագահանդէս մը պիտի ապ իւր ապարանին մէջ և իւր երաժշտական սքանչելի տաղանդին ստատարովը, 'ի նպատակ բարեգործական հաստատութեան մը, ըստ իւր անսպառ աղքատասիրական ազնիւ սովու-

բութեան: Այս առթիւ դարձեալ սիրելի և պանծալի Հայ ա- նունը պիտի փառաւորուի զազգիական լրագրաց մէջ:

Ի վերջոյ ուրախ եմ ծանուցանելու ձեր պատուական Հան- դէսին մեծարգոյ ընթերցողաց, որ քիչ առեկէն Տիկին Աննա Պօթօ (M-lle Anne-Marie Botteau) զազգիացի անուանի հեղինա- կուհին՝ որ արդէն օգտակար և նշանաւոր գրքեր հրատարակած է և համբաւաւոր ձեռնարաններու ալ անդամ է, հին և նոր դարոց մէջ նշանաւոր եղող կանանց կենսագրական Բառգիրքը պիտի հրատարակէ: Ար փափուքի որ Հայ Տիկինացի մէջէն ազ-

գասիրութեամբ, ուսումնասիրութեամբ և բարեգործութեամբ նշանաւոր հանգիստացած կանանց կենսագրութիւններ ալ զըտ- նուին իւր համաշխարհական բառգիրքին մէջ: Ամենայն անձ- նուիրմամբ և ազգասիրութեամբ պատրաստ եմ հաւաքել ինձ ուղղեալ լուրջ տեղեկութիւնք և զազգիարէն թարգմանել: Ար խնդրուի՝ որ կենդանագիրք ալ զըկուին եթէ կարելի է:

Յ. Թէյսսի-զեան:

Ահա հասցէս. M-r Ohannès Tuysuzian, 26 rue des Batignolles, Paris.

Ն Ա Մ Ա Կ Ե Ր Ե Ի Ա Ն Ի Ց

Երևան, 26 Փետրվ: 1881.

Փառք և գոհութիւն ժամանակիս, որ տեսնում ենք Հայոց քննքոյ սեռին երեւելի դեր կատարելիս, թէ ազգօգուտ գործերում և թէ զլիսաւորապէս գրականական ապարիզում: Արդարեւ՝ քաղցր է առնել, որ առանձիններորդ դարում յա- աջ են գալիս այնպիսի Հայուհիներ, որոնք լուսածառու ուսումն մատակարարելու համար հայրենակիցներին հաստա- աւում են, բարեգրում և պահպանում օրիորդաց զարոյններ- այնպիսի Հայուհիներ՝ որոնք զրդուած ազգի թշուառութիւնից նուազահանգէսներ են տալիս յօգուտ Հայաստանի նոթի զա- ւակներին և մեծ համակրութիւն են գտնում ազգային և օտա- րագրի երեւելի անհամարից: Արդարեւ այսօր բարգաւառ պէտք է համարուի Հայ մամուլը, որ միանգամայն պարծանք է համարում և բազմ է խոստանում Հայ սեռին: Ինչպէս Հայ կին՝ հոգիս լցուեցաւ բերկրութեամբ՝ երբ կարգացի «Փարոս Հայաստանի» հանդիսի Էջուկար և Փետրվար ամսատարերը: Ամենորոյ չ'կամենալով վարագործի տակ ծածկած թողնել իմ սրտիս բերկրութիւնը պատիւ ունիմ գրել այս շնորհաւորութեան նամակը, որի մէջ ես թարգման եմ հանդիսանում Երևանի շատ Հայուհիների սրտերի: Նախ շնորհաւորեմք ՚ի սրտէ մեզ համակրելի պատկերազարդ հանդէսն «Փարոս Հայ- աստանի» և Ջերմագին հոգով յանկամք յաջողութիւն և յարաստութիւն նորան: Անտարակոյս եմք որ «Փարոսը» պիտի պատկէ մեր այն յոյսերը՝ որոց ահն ունեւրով սպասում ենք: Հիմնուելով փիլիսոփայի այն խորհրդաւոր մտքի վերայ (թէ ոչ որ լինի իսկոյն ծայրագոյն բարի կենցաղավարութեամբ, այլ ՚ի փոքրագոյնից սկսի՝ զի առ մեծագոյնան ժամանակէ), «Փարոսը» պիտի վառէ լուսաւորութեան ջահը Մասկուայում: Իսկ նորա շատաւիզը, գոնէ նշոյլը անշուշտ պիտի թափանցէ ազգասէր Հայուհեաց սրտերում, և նորանք պիտի աշխատեն հետեւել հրատարակչի օրինակին, մտաւոր զարգացումն և ընդ- հանրապէս լուսաւորութիւնն ապրածելու համար: Ժամանակի երկրթեայ պահանջները ստիպում են յուսալու, որ «Փարոսը» պիտի թողնէ ժողովրդութիւնն ապագայ սերունդին և սա նա- րանից պիտի քաղէ անպատճառ իմաստութեան և գիտու- թեան պառույց: Ուստի աղաչում ենք «Փարոս Հայաստանի» յարգելի հրատարակչուհուհոյն զիւրաւար և տոկուն լինել ամեն անյաջող հանգամանքների մէջ, անշէջ պահել այս Աստու- ածահաճոյ գործը, լինել անվեհեր, քաջ հանդիսանալ ազգի շահերի պատերազմների մէջ, որովհետեւ (եթէ զգոնութեամբ նկատենք շատ ծանր է ձեռնամուխ լինել մի որևիցէ հանդիսի հրատարակութեան գործին), որի հետեւեալ օրը ծնունդի և առնում նորան մի անուս ու անկերթ հակառակորդ: Փիլիսո- փայն ասում է (համաձայնութեամբ փոքրագոյն իրք ածին, իսկ տարածայնութեամբ մեծամեծ իրք տապալին), սակայն մայրա- կան քննքոյութեամբ և հայրական գլխաւորութեամբ պիտի ներուի հակառակորդներին, որ համաձայնութիւնը պահպա- նելով, կարելի լինի գործերը յաջողութեամբ առաջ տանել: Արդ՝ ուրախ եղէք ինձ հետ Հայ կանայք և օրիորդք մեծա- յոյս եղէք, որ այսուհետեւ «Փարոս Հայաստանին» պիտի յետ մղէ խաւարը և անհետացնէ ագիտութիւնը, պիտի խորխտա-

նամք, երբ ունինք այնպիսի Հայ Տիկնայք, որք կարող են գրչով մրցել Արոպացի կանանց հետ: Աղբիւրների և գետերի աղբիւրն անձրեւն է՝ «Փարոսը» կ'առնայ Հայաստանի յորգառատ անձ- րեւ, նորանից կ'առնան գետակներ, կ'առնուին Հայ դասերց սրտերը, և կ'զարգանան, կ'աճեն, կ'բողբոճեն ուսում և գիտու- թիւն: Ընթերցողը կ'համաձայնի ինձ հետ, որ Հայ կինը միշտ ունեցել է իւր լուս յատկութիւնները: Հայ կինը կատարեալ ընկեր է իւր ամուսնոյն: Նա ոչ թէ իրեն պարտք է համարել ընտանեկան գործեր կատարել, իւր դասակները իւր կաթով անուցանել, և այլն, այլ և չէ՛ զբաղել լծակից լինել իւր ա- մուսնի հետ աշխատանայ մէջ, աղամարդին յատուկ գործե- րում (չեմ պնդում թէ առանց բացառութեան է ստածս), նա ուրախութեան օրերում ուրախ է իւր աղամարդի հետ, և տխրութեան միշտ տխուր, յաջողութեան միջոցում տիկինը իսկ անյաջողութեան միջոցում աղախին: Անհերքելի է թէ Հայ կինը իւր աղամարդի դժբաղդութեան ժամանակը ամե- նայն կերպով աշխատում է իւր չափաւորութիւնովը, իւր ա- մուսնական հարազատ հնազանգութիւնովը, սուրբ եկեղեցոյ պատուէրը կատարելով, նորան գլխի տէր ճանաչելով՝ փորա- աւում է նորա տխրութիւնը, և մտածալ է տալի ամեն վիշա- րու նեղութիւն: Կարող ենք պարծենալ նորանով ևս, որ Հա- ուհի նոր ընտանեկան ձիրք, տաղանդ ու հանձնար իւր գործերին յաջող ընթացք տալու համար առաւել՝ քան թէ օտարագրի կանայք: Բայց ափսոսային այն է, որ այս յատկութիւններն գործադրելու համար մենք չունինք տակաւին Օրիորդաց ցան- կալի դպրոցներ: Այո, չունինք, պէտք է ստանք, քանի որ չու- նինք արհեստագիտական դպրոցներ, որպէս զի ուսումն աւար- տելուց յետոյ, օրիորդ կարողանայ որ և է գործով պիտանացու լինիլ ազգին, ծնողաց, կամ ապագայ ամուսնայն: Մեր օրիորդ- ները՝ այժմեան ուսումնարանները աւարտելուց կամ թերի թերելուց յետոյ, առանց որ և է արհեստի առն են գտնում բերելով իրենանց հետ մի քանի կոտորակներ, քաղաքների և ծովերի անուններ, որոնք ոչնչով չեն ապահովացնում Հայ ազգիան, և սա գտնում է թուրքաց առածի նման՝ «Իքի գինեան գիշարի» (երկու հաւատից էլ գորս), այսինքն՝ մնում են զուրկ վերոյիշեալ գովելի յատկութիւններից, միև- նոյն ժամանակ իւր ստացած գիտութիւնով ոչնչո՛ւ օգուտ չէ տալիս, և ըստ երևութիւն լինում է ոչ այլ ինչ, եթէ ոչ մի կապիլի Արոպացի կնոջ հագուստով և նիստուկացով: Արպէս զի Հայ ծնողները չ'զղջան իւրեանց դասերաց ապագայ կու- րութեան համար կրկնում ենք, որ հարկաւոր են արհեստա- գիտական դպրոցներ: Արհեստական դպրոցներ են մեզ յանկալի և օգտաւէտ, կրկնում ենք, որովհետեւ, ինչպէս ասացինք, նու- րանց մէջ են ձուլում կեանքի պիտանի աղջիկները: Յուսով ենք որ Հայ օրիորդաց յառաջագիմութեան բազմի անիւր շուա գեպի ալ կ'զբորուի և լուսատու գիտութեան ճառագայթների շնորհիւ և մենք կ'աճենք ու կ'զարգանանք: Ուրեմն սպասենք մտա ապագային:

Սրբոհի Խոսրոսեանց:

Գ Ի Տ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Ա Ր Ո Ւ Ե Ս Ս

Վ Ե Բ Ձ Ի Ն Գ Ի Ի Տ Ե Բ Ի Ն Ա Ս Տ Ե Ղ Ա Բ Ա Շ Ի Ո Ւ Ի
Թ Ե Ա Ն Մ Ի Զ ։

Ք Ե Ղ Ա Ո Ւ Մ եւք Globe անուն օրագրի ուսումնական բաժնից հետեւեալ հետաքրքրական տեղեկութիւնքը վերջին գիւտերի մասին, որք եղան աստեղաբաշխութեան մէջ։ Արէս կամ ըստ եւրոպացոց Մարս մոլորակն, որպէս յայտնի է, բոլոր միւս մոլորակներից աւելի նմանութիւն ունի երկրիս հետ։ Արէս դառնում է շուրջ իւր լիսեօրի. (ՕՕԵ) համարեա՛ թէ նոյնքան ժամանակում, որքան և երկիրս. Արէսի օրուայ մեծութիւնն է 24 ժամ, 37 րոպէ և 35 վայրկեան. Արեմն ժամն այդ մոլորակի վերայ մէկ ու կէս րոպէով աւելի է՝ քան մեր երկրի վերայ։ Արկրի նման ունի նա երկիր և ծով. բեւեռական մասները նորա վերայ նոյնպէս ծածկուած են ձիւնով։ Այս կարծիքս, որ ամենատարածուած է աստեղաբաշխների մէջ, հիմնվում է նորա վերայ, որ Արէսի մակերևոյթն ցուցանում է մասներ, որոց մի քանիսն շատ պայծառ են, և մի քանիսն շատ մութ։ Որովհետև այդ մասունքներն միշտ երևում են իբր ունեցող միւսնոյն կերպարանք, սորանից հետեւեցնում են իբր թէ կայ այն տեղ ցամաք և ծով։ Այսպիսի իսկ կերպարանք, ուսումնականների կարծիքով, ցուցանելու է մեր երկրին Արէսի բնակիչներին, եթէ կան նորա վերայ բնակիչք։ Վերջին ժամանակներումս Լուսնից Գրուլս անուն աստեղաբաշխն, Ռիօմանէյրօի աստղագիտանոցին, որ երկար ժամանակ պարապեցաւ հետազոտութեամբ այդ մոլորակների, հրատարակեց Արէսի 26 պատկերը, որք հանուած են այլ և այլ ժամանակներում։ Նա հասաւ հետեւեալ եզրակացութեանց. նախ՝ թէ մութ և պայծառ մասունքներն մին մինից փոքր են զանազանվում. նոցա մէջ գեղեցիկ տեսնվում է աստիճան առ աստիճան ներկերի փոփոխումնը, որ անյարմար է ենթադրութեան, և մասներից մի քանիսն կարծում է նա լինել երկիր և մի քանիսն՝ լճեր և ծովեր։ Միւս կողմից բծերի իսկական կերպարանքն փոխվում են, և եթէ ոչ ընդհանուր կերպով, գծերով, այլ գոնէ պարագայներով. մութ մասունքն մեծանում և փոքրանում են, երբեմն երևում են նոցա վերայ փոքրիկ բծեր, որք յետոյ անհետանում են. Ետ մեկնութիւններ տրուեցան այդ երևոյթին. բայց ամենաճիշդն այն է, որ գոյների աստիճան առ աստիճան փոփոխումնը կախուած է ամպերի աւելի կամ պակաս թանցրութիւնից, որք ծածկում են մոլորակների քանի մի մասունքը։ Իսկ այն հանգամանքին, որ վերաբերում է նորա քանի մի մեծ մասների միշտ մէկ գոյնով լինելուն, ծագում է անձրևների կարգաւորութիւնից ցամաքի և ծովի վերայ։ Արկրագունդս ցուցանում է նոյնպիսի երևոյթ. նորա քանի մի մասների մէջ, զորօրինակ՝ Սահարայի, Ագիպտոսի մէջ՝ ամպերն հազուադիւրս բաներ են. իսկ Անտլանտեան ովկիանոսի հիւսիսային կողմերում, Անգղիայում, Նոր-Աօրքում՝ երկինքն համարեա՛ թէ միշտ ծածկուած է ամպերով և անձրևն գալիս է այդ տեղերում տարին 200 օր։ Համեմատութիւնն կատարեալ անելու համար, երկրիս և Արէսի մէջ, վերջնոյս պակասում էր միայն արբանեակ (աստեղաց մոլորակն—սաթէլիթն) ունենալ. այդ պակասորդը ինչպէս յայտնի է՝ լցուցուած է վերջին ժամանակներումս մինչև

անգամ աւելի քան հարկաւոր էր. մէկի տեղ գտնուեցան նորա երկու լուսիններն։ Այս յոյժ հետաքրքրական գիւտն յայտնուեցաւ 1877 թուականի Օգոստոսի 11 ին, երբ տեսնուեցաւ Արէսի առաջին արբանեակն և վեց օրից յետոյ երկրորդն. նոցա գիւտի համար մենք պարտական ենք Վաշինգտոնի աստղագիտանոցի աստեղաբաշխ Ասաֆ Նոլլին։ Այդ երկու արբանեակները նորից տեսանելու համար, հարկաւոր եղաւ սպասել երբ մոլորակս կը կանգնի երկրիս առջևում, որ և եղաւ 1879 թուականին, պատճառ որ այդ ժամանակ Արէսն գտանվում է մեր երկրին մօտ, ուստի և աւելի լաւ պայմանների մէջ զննութեան համար. այս անգամ երկու լուսինն ևս կարելի եղան դիտել Արոպիոյ բոլոր աստղագիտանոցներից։ Բայց այս լուսիններն շատ փոքր են. նոցա տրամագիծն 10—12 քիլոմէթրից աւելի չէ, երբ մեր լուսինն, որ անգրանիկ կարող է համարուիլ, ունի իւր տրամագիծում 3,500 քիլոմէթր։ Արէսի երկու արբանեակներն նմանում են ամեն կողմից մեր լուսինին. Մեր լուսինն գտանվում է 377,000 քիլոմէթր հեռաւորութեամբ մեր երկրից, իսկ Արէսի երկու արբանեակներն պտոյտ են գալիս նորա չորս կողմում՝ մինն 20,000 քիլոմէթր և միւսն միայն 6,000 քիլոմէթր հեռաւորութեամբ նորա բնակիչների գլուխների վերայից։ Մեր լուսինն պտոյտ է գալիս երկրիս չորս կողմում 27 օրուայ մէջ. Արէսի լուսինն, ամենահեռաւորն, կատարում է այդ ճանապարհորդութիւնը 30 ժամի և 18 րոպէի մէջ, իսկ մօտագոյնն՝ միայն 7 ժամի և 39 րոպէի մէջ։ Այս վերջին արբանեակս ներկայացնում է մինչև անգամ, որքան յայտնի է, միայն մէկ երևոյթ մեր արեգակնային կարգի՝ սիստեմայի՝ մէջ. նա պտտում է մոլորակի չորս կողմում աւելի փոքր ժամանակի մէջ, քան պահանջում է Արէսն իւր լիսեօրնի շուրջը դառնալու համար, այնպէս որ Արէսի բնակիչներն մէկ օրուայ մէջ տեսնում են իւրեանց մէկ լուսնի ծագումնը և մուտը երեք անգամ։ Այդ երկու լուսինների պատմութիւնն ցուցանում է մեզ զարմանալի և առանձին յատկութիւններ, որոց աւելորդ չէ՛ յիշել։ Որովհետեւ երկիրս ունի մէկ լուսին, իսկ Լուսնիթագն (Նուպիտէր) չորս, այս պատճառաւ Քէպլէր աստեղաբաշխն, համեմատական կանոնով, վճռեց՝ թէ Արէսն, նոցա միջով դրուած, ունենալու է երկու արբանեակ։ Թէպէտ, այն ժամանակ, ոչ ոք տեսած չէր այս վերջիններս, սակայն կարծիքն նոցա մասին շատ տարածուած էր, և նոցա հետքն գտանում ենք քանի մի երկասիրութեանց մէջ։ Այսպէս՝ Վոլթեր, Միկրոմէնասի պատմութեան մէջ, ասում է ՚ի միջի այլոց. «Բայց դառնանք մեր ճանապարհորդներին, թողնելք Լուսնիթագը, նոքա սլացան հարկւր միլիօն տարածութեան մէջ և անցան Արէսը, որ ինչպէս յայտնի է հինգ անգամ փոքր է մեր մոլորակից. նոքա տեսան Արէսի մօտ երկու մոլորակ, որք կորան մեր աստեղաբաշխների աչքից։ Նս գիտեմ՝ թէ ՚. Վասթէլ՝ պիտի բողոքէ, ծիծաղելով իմ վերայ. պիտի ընդդիմանայ այդ երկու լուսիններին. բայց թողնելք նորան։ Վառնում եմ նոցա, որք մտածում են համեմատական կանոնով. նոքա ասելու են՝ թէ դժուար է Արէսին, որ գտանվում է արեգակից շատ հեռու, պտրտիլ գոնէ առանց երկու լուսինների»։

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ԿԱՐԴԱ ՈՒ ԿԻՍԱՆԱՍ

ԵՐԵՎԱՆԻ ԱՆՍՏԱԿՑԱԻԹԻՒՆ:

— Է՛, վո՞նց դասը քո՞նք, Գեորգ Ար-տեմի՛չ:

— Վո՞նց պիտի գտնեմ, անտարակոյս շատ հետաքրքրական դիրք է և նրա հեղինակը շատ սրամիտ մարդ է երևում «Փարոսի» Լուսարարի նման. շատ ծիծաղեցի Արծրու-նու կենսագրութիւնը կարգալիս, բայց շատ էլ ցաւեցայ: Վո՞նց իս կարծում Պ. Համբարձում, եթէ մինը Ռուսաստանի մեր միւս քոյրերին էլ նկարագրելու լինի, ասը կը դո՞յց մեր Հայերին:

— Ինչո՞ւ չէ. կարծում իմ որ բաւական կունենան. բայց միւս կողմից անս գու էն ժա-մանակ «Քոյրերի» կուխը ու դարձադարձ անս ինչ ուշուց, հայհոյանք կութափին հեղինակի գլխին, որ Աստուած ազատի: Իժում էլ, կէս բերան, մինի անունը եթէ յիշուի սրեւիցէ պատճառով մէկ լրագրում, իսկոյն սկսում են Երեմիայի ողբը, կարծես թէ վերաւորուողն ինքն Երեմիան լինի... Կամ եթէ մէկի հետ խօսելիս՝ պահես քու պատուի արժանաւորութիւնը, քիչ իսկոյն բարբոն կուա-նուանեն ու խօսքերդ գեներալական որոտում կամ բերօհրա-տական կապրիզ կուկարծեն...

— Հա՛, սրուստ իս ասում Պ. Համբարձում, ասո՞ւ իս էլ ան-դեալ օր բալկոնում նստած էի, հանկարծ մէկ մոծակ եկաւ ու կծեց ինձ. մինը հարցնի նրան՝ այ փուչ կենդանի, ես ի՞նչ իմ առեւ թեզ, վուր եկար կծեցիր ինձ: Գիցուք սա կենդանի էր, կծեց ու թաւաւ, և ես ձայն չհանցի. բայց դու անս մեր խեղճ Էջմիածինը վո՞նց է համբերում, Մանկունին վո՞նց է դիմանում: Մեղա՛ն ու Մշակը կարծես թէ խօսք են կապել ծակել ու ծակծակել նրանց... Պոլեւոյի էլ խոմ պակաս չեն...



ԵՐԿՈՒ ԲԱՐԵԿԱՄ:

— Է՛, օրհնած, Համբարձումն ի՞նչ անեն, ուրիշ ծար չունին. Հայաստանից համբերու-թեան օրինակ ին վեր աւնում, որպէս հա-րազատ սրդիք...

— Արդարիս Պ. Համբարձում, Հայաստանը սրուստ է քաջութեամբ համբերում է ու պէտք է համբերի. լսեցիր թէ Բիսմարկին էլ նորերումն ի՞նչ է ասել Գոշէնին. ասիլ է նա իր թէ Հայոց խնդրի լուծման ժամանակը դեռ չէ հասել... Բիսմարկից էղպիսի խօսք ո՞յ կապատեր:

— Մի՛թէ չես իմանում՝ վուր նա ոչոքին իր կեանքում լաւութիւն չէ՛ առել. նա միայն իր ազգը ճանաչում է և նրա օգուտը...

— Հա՛, իրաւ իս ո՞ւմ հոբան է՝ վուր Հա-յերը սովութիւնից մեռնում ին, երկրաշար-ժութիւնից քանդվում, Քրդից սպանվում... Մէկ մտածող կար, Կերսես Պատրիարքը, նա էլ յուսահատուել է, ծարր հասել է, և ուղում է, ասում ին, թոյնի Պատրիար-քութիւնը...

Հայի բանը միշտ էղպէս է...

— Ասում ին դարձեալ՝ վուր ծերունի Գլադատունը գովել է Պարլամենտում Գոշէնի քաղաքականութիւնը և շատ ցաւե-ցել է՝ վուր նա վերագաւնում է առանց վերջապէս Հայոց խնդրը բայց աւելացնում ին՝ թէ նա սաստիկ հրահանգներ է ատել Լորդ Գիլֆիլդերին, վուր իր բոլոր ջանքը ու աշխա-տանքը գործ գնի Հայոց հարցը վճուելու համար... Կովի-քովել, ասում ին, աշխատում է...

— Արեմն ի՞նչ մնաց... թէ կենդանի մնանք՝ կուտեսներ: Իժում մնաւ բարով, գնում իմ Գուրախի Ղազարի մօտ, ասում ին Էջմիածին է գնում Մշակը հրամանով, մեր կաթուղիկոսի քեփը, հարը իմանալու համար, ու Մանկունուն ճանապարհ-ցոյց տալու համար դէպ ի Պրուսա...

ՄՈՒՍԱԿ:

ՍԱՅԱԳՈՅԺ

Այս տարի Մտերեանց գերգաստանը երկու մեծ կորուստ ունեցաւ. նախ, Յունուարի 2 ին, վախճանեցաւ ի Զմիւռնիա, ի հասակի 68 ամաց, Տիկին Առաջառէ Գրիգորեան Պալապա-նեան, և ապա՝ Մայիսի 25 ին, վախճանեցաւ ի Մոսկուա, ի հասակի 64 ամաց, Տիկին Երզնան Գրիգորեան Մտերեանց: Առաջինն էր քոյր, իսկ երկրորդն՝ ամուսին հանգուցեալ Մտեր Մ. Մտերեանց Զմիւռնացոյ:

ԹՂԹԱԳԻՐ



ՊԱՏԱՍԻՆՆԻՔ ԻՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

— Սո՛ւիտ. առ Յ. Մ. Պ.— Այսուհետեւ «Փարոսը» կուղար-կուի Չեք ի Տրապիզոն, որպէս կը խնդրէք, միայն թէ չը-զբաւուի ի Թուրքաց կառավարութենէն:

— Եյի՛ առ Մ. Ա.— Ք. Մ.— Չեր ուղարկած պատկերն կը տպագրուի:

— Երեւան. առ Ս. Գաղեանց.— Արկին կարգացէ՛ք մեր պ. Սարգսեան Լեզուագիտին առած պատասխանը հանդիսիս նախընթաց տետրին մէջ և մի մուտքէք «Պատկ» լրագրի Չեք տուած շատ գեղեցիկ և օգտակար խրատը:

— Պ. Պոլեւ. առ Մ. Ս. Պ. Չեր խնդիրքը կատարել կարող չեմք, ըստ որում Չեր յառաջ բերած փաստերն անհիմն ենք համարում:

— Կոր Զոհա. Ա. Վ. Չեր համակից հարկաւոր եղած տեղե-կութիւնքը քաղցինք: Ըարունակեցէք:

Տպագրուելու չէ «Աղգային Ղեճակ», գործ Միխոի:

Առ Բարեկամ.— Գուր, ազնիւ բարեկամ, խորհուրդ էք առելս յառաջակայ ամի հրատարակել «Փարոսը» ամիսը մէկ անգամ: Շնորհակալ ենք Չեր առած խորհրդից գեղեցիկ միտք է, խօսք չկայ, բայց տեսէք որ կատարումը դժուար: Մենք երկիւղ ենք կրում, որ յառաջակայ ամի «Փարոսն» բնաւ չհրատարա-կուի՝ յուրախութիւն Սարգսեանցների, Գաղեանցների և Ըն-կերութեան:

Վ Ի Գ Ա Կ Բ: — Տետր Գ. էջ 14. Ոտանաւոր յօդուածին. Ա. տուն, սող 6-մուտքաւ. պիտի լինի՝ մուտքաւ: — Գ. տուն, սող 3-խենդէս. պիտի լինի՝ խինդէս:

ՊՐՕՖԵՍՈՐ Յ. Կ. ԱՅՎԱԶՈՎՍԻՅԻ

Գեղարուեստան պատկերները արդէն վաղուց է որ համաշխարհական անուն են ստացել և զարգարում են ուրիշ և օտարազգի մեծատունների շքեղ սալոնները և պատկերական կալիքները, բայց հասարակութեան մեծադոյն մասին համար դոքա իւրեանց թանգութեան պատճառով բոլորովին անմատչելի են:

Օրինակով իւր տաղանդի բազմաթիւ պատվոգներին, որոնք արժան զնով ցանկանում են ունենալ նորա պատկերների ճիշդ արտատիպը պրոֆեսոր Այվազովսքին, ինձ բացառական իրաւունք տուաւ հրատարակել իւր ամենահրեւելի պատկերներուն Ի-դաֆիլ (Oleographie) Երասիպիլերը (Facsimile), այն անհրաժեշտ պայմանով, որ հրատարակութիւնը լինի կատարեալ գեղարուեստական գործ:

Սաղիր լինելով հրատարակել մի շարք պ. Այվազովսքիի հռչակաւոր պատկերների, ես ներկայ ժամանակս ձեռնամուկս եղայ փորձի համար արտատպել նորա վերջի պատմական պատկերները Խ. Կոլոմբ ճանապարհոմ դէպէ Ամերիկայ (պէկո-ժոն-Լէ-մ Ովիլանտի վերայ) և Կոլոմբի հանդիսար կերպով ցամառ իջնելը Սան-Սալվադոր կղզոմ (արեգակն ծագոմ): Երկու պատկերներն էլ երկայնութեամբ մի արշին (70 1/2 sent.) և լայնութեամբ 12 վերշոկ (52 1/2 sent.) արտատպվում են Բերլինում Շտիյնբոկի երեւելի գործարանում և լոյս կ'տեսնեն ներկայ տարւոյս Օգոստոսին:

Որովհետեւ օրօգրաֆիական պատկերների քանակութիւնը ճիշդ գեղարուեստական արտատիպ ստանալու նպատակով „խօսիւ սահմանափակուած“ է, ուստի ցանկացողը կարող են, կանխիկ ստորագրուել, զիմելով ինձ հետեւալ հասցէով՝ „С.-Петербургъ, Владимирская ул. д. № 15, кв. № 8. Леониду Егоровичу Мазирову“: Երկու պատկերներին ստորագրվողները ձանապարհածախսով հանդերձ վճարում են 28 Ռո-բլէ, իսկ մի հատին 17 Ռո-բլէ: փողը կարելի է ուղարկել մասամբ, բայց յառաջ քան բոլոր գումարի լրումն պատկերները չեն ուղարկվել:

Օրօգրաֆիական պատկերները պիտի ուղարկվին կտաւի վերայ քաշած՝ պատերը զարգարելու համար, կամ բրիստոլեան թղթի վերայ՝ այլոմների համար, ուստի ստորագրվողները թող բարեհաճեն յայանելու կտաւի թէ թղթի վրայ ցանկանում են ստանալ յիշեալ պատկերները:

Պատկերների համար պատրաստվում են „շքեղ շրջանակներ“ զանազան արժանաւորութեամբ և կուղարկվին ստորագրվողներին ըստ նոցա պահանջման ամենամատչելի զնով:

Տաճկաստանցիք կարող են զիմել հետեւալ հասցէով՝ „St.-Petersbourg, rue Wladimirsky, № 15. M-r L. Maziroff,“ ուղարկելով մէկ պատկերի համար 50 ֆրանգ, իսկ երկուսին միասին 80 ֆր:

Հրատարակել 1. Մաշիբեանց:

ՎԻՄԵՐՈՒԹԵՆՍԻ ԼՅՍ տեսաւ և վաճառվում է առայժմ Աղեքսանդրապոլում ԿԵՐԱՊԵՏՅՈՎ ՀԱՆՁՆԱԿԱՆՍԵՆՍԻ աշխատասիրած երկրորդ նկարը, որ պարունակում է ԽՆԾՎՈՒՆԻՅ մենաստանների հետ ՇԻՐԵԿԻ մի քանի նշանաւոր ՀՆՈՒԹԵՆՍՅ տեսարանները, որոնք հրատարակուած չեն տակաւին ոչ լուսանկարով և ոչ ևս տպագրութեամբ: Գինն է 1 ուրբ. Ստանալ ցանկացողները պէտք է զիմեն հեղինակին հետեւալ հասցէով. „Въ г. Александрополь. Каранету Хачатуряну Агаджаніану.“

Հրատարակուեցաւ Ս. ՇԱՀԱՐՅԱՆԻ „ՀԵՐԱՐԵԿԵԼԻՕՍ ՉԸՅՆ“ վերնագրով՝ 8 ծալ, 351 երեսից բաղկացած և Ստեփաննոս Նազարեանցի պատկերով զարգարուած գեղեցիկ և արժանի յամենայն կողմանէ ուշադրութեան երկասիրութիւնը: Ստանալ կարելի է հեղինակի մօտ Մոսկուայում: Գինն է 2 ուրբ: Օտարաքաղաքացիք իւրեանց նամակների հասցէն գրելու են այսպէս. „Москва, Армян. пер., въ зданіи Лазарев. Института восточныхъ языковъ, Сумбату Семеновичу Шахъ-Азизу“:

ԳԱՄԵՐ-ՔԱԹՈՂՈՍԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՔԸ: Նոր տպագրութիւն. Մոսկվա. 1881. հեղինակի պատկերով. գինն է 50 կոպ. Հրատարակութիւն Թիֆլիսի Ընկ. Հայ. գրք. թ. 11:

ԲՆԵՐ ԽՕՍՆԱԿ Նիկողայոսի Տեր-Աետիքեան. Շուշի 1881. Գինն է 50 կոպ. Հրատարակութիւն Տ. Յ. Նազարեան (Հրատարակչէ հասցէն՝ Въ Шушъ, Тирапу Назарянъ):

ՍՈՒՆԿ ՀՆՅՆՍԵՆԻ, Ազգային լիակատար երգարան. հրատարակութիւն Ա. Գրիգորեանցի. Առաջին հատոր, երկրորդ տպագրութիւն, փոփոխած. Բազու, 1881. գինն է 1 ուրբ (Հրատարակչէ հասցէն. Аваку Лазаревичу Григоріану, въ Баку):

„МАЯКЪ АРМЕНИИ“ ИЛЛЮСТРИРОВАННЫЙ ЖУРНАЛЪ,

НА АРМЯНСКОМЪ ЯЗЫКЪ,

ИЗДАВАЕМЫЙ ВЪ МОСКВѢ

СОФІЕЮ МСЕРІАНЦЪ.

№ 4.

ГОДЪ ТРЕТІЙ.

1881 ГОДА.

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ.
Ա. Սրբուհի Մայրապետ Գալֆանան	1
Բ. Կեանք	2
Գ. Շիրակի մի քանի հնութիւնները (Շարունակութիւն)	3
Գ. Հեռու երկիր թուաւ, փախաւ	10
Կ. Գրօշակակիր, գործ Ալֆօնսայ Գօզէ	—
Չ. Տըթոր Տիգրան Փեշտիմալճեան	13
Լ. Չէլա-Սօլթան և Պարսկաստանի Հայերը	14
Բ. Եւտրալիայի ապագայն	15
Թ. Վիգորը Հիւզօ	—
Ժ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԵԳԻՐ	17
ԺԱ. ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ	25
ԺԲ. ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ	26
ԺԳ. ՉԱՆԱՉԱՆ ԳԻՏԵԼԻՔ (Հապկի 2 և 3 երեսներում) :	

ՅԵՆԿ ՊԵՏԿԵՐԵՅ

- Ա. ԺԱՄԱՆԱԿԱՆՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՔ:— Ա. Սրբուհի Գալֆանան (էջ 1):— Բ. Տըթոր Տ. Փեշտիմալճեան (էջ 13):— Գ. Գրիգոր Արծրունի (էջ 17):—
- Բ. ԺԱՄԱՆԱԿԱՆՑ ԱՐՔԱՅԱՍՏԱՆԻՔ:— Ա. Չէլա-Սօլթան երէց որդի Պարսից Հահի, ՚ի յաւերուածի:
- Գ. ՏԵՍԱՐԵՆՔ ԱՇԽԱՐՀԻ:— Ա. Խնձկօնից Մենաստանները՝ Ս. Կարապետ, Ս. Աստուածածին, Սուրբ Սարգիս (էջ 3):— Ս. Ստեփաննոս և Ս. Գրիգոր Լուսաւորիչ (էջ 5):— Բ. Մագդաղինէ դեան (էջ 16):—
- Գ. ԱԶԳՔ ԱՇԽԱՐՀԻ Ա. Մարտիթանացի կանայք (էջ 8):— Բ. Բնակիչք Աւթազար քաղաքի (էջ 9):— Գ. Մշէցի Հայք (էջ 20):—
- Կ. ԺԱՄԱՆԱԿԱՆՑ ԵՐԵՒԵԼԻ ՀԵՂԻՆԱԿ:— Ա. Վիգորը Հիւզօ (էջ 21):—

Փարս Հայաստանի հանդէսը ստանալ ջանկացողքն իրեանց նամակաց հասցէն գրելու են այսպէս. Вѣ Москвѣ, Меньшикова башня, дома Милованова, Ея Превосходительству Издательному „Маяка Арменіи“ Софіи Мсеріанцъ. Տաճկաստանի Հայք կարող են բաժանորդ գրուել դիմելով ՚ի Կ. Պօլիս առ Պ. Միրզա Մսերեան, Ասմա պլթը Բաբազ խանի մօտ, թիւ 26, կամ ՚ի Զմիւռնիա՝ առ Պ. Գրիգոր Մսերեան, ՚ի Սիլվիե խան, վերի յարկ, թիւ 17, և կամ ուղղակի դիմել առ հրատարակիչն, իրեանց նամակաց հասցէն գրելով այսպէս. à Son Excellence M-me Sophie Missériantz, à Moscou, Menchikowa bachnia, maison Milovanoff.

Խոհանրի Պարսիստանայն խաչարար խաչիկեանց:

Հրատարակիչ Սոֆիա Մսերեանց: